Գիրքը հրատարակվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ իրավաբանների միությանը, ՀՀ փաստաբանների պալատին, Հայ երիտասարդ իրավագետների միությանը, Զարգացման հայկական ինստիտուտին իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքի մյուս հրատարակություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության ինտերնետային կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am
www.judge.am

ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ARTUR CHAKHOYAN

CHILD RIGHTS

FAMILY LAW MANUAL

Edited by: **Vahe YENGIBARYAN**
Executive Director of the Association of Judges of the Republic of Armenia, Professor of YSU Law Faculty, PhD in Law

Lingvo-stylistic editor: **Armine NAZARYAN**

YEREVAN
«Antares»
2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Վահե ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ

Լեզվաոճական խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**

Երևան
«Անտարես»
2010

ՀՏԴ 341.231.14
ԳՄԴ 67.91
Չ 166

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Չախոյան Արթուր
Չ 166 Երեխայի իրավունքներ.- Եր.: Անտարես, 2010.- 112 էջ:

Ձեռնարկում համակարգված և հանրամատչելի եղանակով ներկայացված են երեխայի իրավունքներին վերաբերող հիմնահարցերը, ինչպես նաև այս բնագավառում ՀՀ օրենսդրությունն ու դատական պրակտիկան:

ՀՏԴ 341.231.14
ԳՄԴ 67.91

ISBN 978–9939–51–175–7

© ՀՀ դատավորների միություն, 2010թ.
© Չախոյան Արթուր, 2010թ.
© Ենգիբարյան Վահե, 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 9

ԲԱԺԻՆ 1
Երեխայի իրավունքների վերաբերյալ
օրենսդրությունը 11
§1. ՀՀ Սահմանադրություն 11
§2. Միջազգային պայմանագրեր 13
§3. ՀՀ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր..... 14

Բաժին 2
ՀՀ օրենսդրությունը որպես երեխաների իրավունքների
պաշտպանության երաշխիք 16
§1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ
օրենքը որպես երեխաների իրավունքների
պաշտպանության երաշխիք 16
§2. «Առանց ծնողական խնամքի մնացած
երեխաների սոցիալական պաշտպանության
մասին» ՀՀ օրենքը որպես երեխաների
իրավունքների պաշտպանության երաշխիք 23
§3. «Առանց ծնողական խնամքի մնացած
երեխաներին բնակարան տրամադրելու կարգը»
որպես երեխաների իրավունքների
պաշտպանության երաշխիք 26

Բաժին 3
Որդեգրում (դստերագրում) 31
§1. Որդեգրման (դստերագրման) հասկացությունն
ու պայմանները 31

§2. Որդեգրման կարգը 34
§3. Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց որդեգրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի հաշվառման կարգը 40
§4. Որդեգրել ցանկացող անձանց հաշվառման կարգը 45
§5. ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող՝ ՀՀ տարածքում բնակվող ՀՀ քաղաքացիների հաշվառումը 47
§ 6. ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների հաշվառումը 49
§7. ՀՀ-ում մշտապես բնակվող՝ երեխաներ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիների կենսապայմանների ուսումնասիրության կարգը 52

Բաժին 4
Խնամակալությունն ու հոգաբարձությունը երեխաների նկատմամբ 57
§1. Խնամակալության և հոգաբարձության հասկացությունը 57
§2. Խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները 58
§3. Խնամակալության և հոգաբարձության դադարումը 62

Բաժին 5
Երեխաների քաղաքացիության որոշման կարգը 65
§1. Երեխայի քաղաքացիությունը ծնվելու ժամանակ 65
§2. Երեխայի քաղաքացիությունը որդեգրման ժամանակ 66

Բաժին 6
ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք 68
§1. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք 68
§2. «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք 72
§3. «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք 74
§4. «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք 78

Բաժին 7
Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները 80

Բաժին 8
ՀՀ գերագույն դատարանի պլենումի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ 82
§1. «Հայրությունը որոշելու և երեխաների դաստիարակության ու պահելու վերաբերյալ վեճերը լուծելիս դատարանների կողմից օրենսդրության կիրառման մասին» ՀՀ գերագույն դատարանի որոշումը 82
§2. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ մասի, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ» ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը 92
§3. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ և 225-րդ հոդվածների, Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ» ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը 97
§4. «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, ՀՀ Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ» ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը..... 102

ՆԱԽԱԲԱՆ

Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է, իսկ երեխաները՝ այդ բջջի ամրությունն ու զարգացման շարժիչը:

Հայ իրականության մեջ միշտ էլ ընտանիքը եղել և մնում է որպես պետության հենարան և մշտապես գտնվել է հասարակության ուշադրության և հոգածության կենտրոնում: Պատմականորեն մեր ժողովրդի կողմից միշտ էլ գիտակցվել է այն հանրահայտ իրողությունը, որ առողջ ընտանիքը պետության հզորության երաշխիքն է, իսկ երեխայի իրավունքների և շահերի իրականացումն ու պաշտպանությունը հնարավոր է ապահովել առողջ ընտանիքի առկայության պայմաններում:

Այս առումով ցանկացած իրավական պետություն պետք է ելնի հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մոտ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան պետք է գտնվի հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո:

Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում է հիմնականում ընտանիքում, որի համար պատասխանատվություն են կրում ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:

Յուրաքանչյուր պետության մեջ երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

Սույն ձեռնարկի նպատակն է հասարակությանն իրազեկել նշված բնագավառին վերաբերող իրավական փաստաթղթերին՝ ներկայացնելով ՀՀ Սահմանադրության մեջ, համապատասխան օրենքներում և միջազգային պայմանագրերում ամրագրված նորմերը:

Ձեռնարկի առաջին բաժնում ներկայացված են երեխաների իրավունքներին վերաբերող օրենսդրության կառուցվածքը՝ ըստ դրանց իրավաբանական աստիճանակարգության:

Երկրորդ բաժնում համառոտ, պարզ և հասկանալի ձևով ներկայացված է երեխաների իրավունքներին վերաբերող հայրենական օրենսդրությունը, որտեղ սահմանված են երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պար-

տականությունները, որոնց գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք հանդիսանալ երեխայի իրավունքների ապահովման համար, երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքներն ու ձևերը և այլն:

Հաջորդ երկու բաժինները նվիրված են այնպիսի կարևոր ինստիտուտների, ինչպիսիք են՝ որդեգրումը (դստերագրումը), խնամակալությունն ու հոգաբարձությունը: Որդեգրումը մեծ դեր է կատարում ընտանիքի ամրապնդման գործում: Զգալի թվով ամուսնություններ երեխա չունենալու պատճառով դադարում են: Մինչդեռ երեխայի որդեգրումը շատ դեպքերում կանխում է ընտանիքի քայքայումը: Բացի դրանից, որդեգրման շնորհիվ դրսևորվում է նաև մարդկանց հայրենասիրական վերաբերմունքն անօթևան երեխաների նկատմամբ, քանի որ որդեգրելով վերջիններիս, նրանք իրենց վրա են վերցնում պետության հոգսի մի մասը, իրական օգնություն ցույց տալիս պետությանը՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին դաստիարակելու գործում:

Այնուհետև, հաջորդ երկու բաժիններում փորձ է արվել համառոտ, սակայն մատչելի ներկայացնել որդեգրման կարգը, պայմանները, որդեգրել ցանկացող անձանց հաշվառման կարգը, խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները, խնամակալության և հոգաբարձության դադարումը, երեխայի քաղաքացիության որոշումը որդեգրման ժամանակ և այլն: Ընդ որում, ձեռնարկի գործնական նշանակությունն ապահովելու նպատակով նշված բաժնում ներկայացված են նաև ոլորտին վերաբերող փաստաթղթերի տիպային նմուշները, որոնց նախապես ծանոթ լինելով քաղաքացիները հնարավորություն կունենան մատչելի և իրավաբանորեն գրագետ լրացնել ու գործնականում արդյունավետ կիրառել դրանք:

Վերջին բաժնում համառոտ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված այն միջազգային պայմանագրերը, որոնք այս կամ այն կերպ շոշափում են երեխաների իրավունքները:

Եվ վերջապես, երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՀ դատական պրակտիկայի մասին ընթերցողին ծանոթացնելու նպատակով հավելվածի տեսքով ձեռնարկում ներկայացված են նաև ՀՀ գերագույն դատարանի պլենումի և ՀՀ վճռաբեկ դատարանի քննարկվող բնագավառին վերաբերող որոշումները:

ԲԱԺԻՆ 1
Երեխայի իրավունքների վերաբերյալ օրենդրությունը

§1. ՀՀ Սահմանադրություն

Երեխայի իրավունքների վերաբերյալ օրենսդրությունը բաղկացած է այն նորմատիվ իրավական ակտերից, որոնք կարգավորում են երեխայի մասնակցությամբ ծագող հարաբերությունները:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են երեխայի իրավունքները կարգավորող այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը»:

Անհրաժեշտ ենք համարում քննության առնել Սահմանադրության, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի, երեխայի իրավունքներին վերաբերող ՀՀ այլ օրենքների, միջազգային պայմանագրերի, ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերի հարաբերակցության հարցը:

Սահմանադրությունը (Հիմնական օրենքը) պետության՝ բարձրագույն իրավաբանական ուժով օժտված հիմնական օրենքն է և հենարան է ընթացիկ օրենսդրության համար: ՀՀ Սահմանադրության հոդված 6-ի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նոր-

մատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության այս դրույթից կարելի է անել մի շարք կարևոր հետևություններ:

Նախ՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը չպետք է հակասի Սահմանադրության նորմերին: Իսկ հակասության դեպքում գերապատվությունը տրվում է սահմանադրական նորմին և այն կիրառվում է անմիջականորեն:

Բացի դրանից, Սահմանադրությունը բովանդակում է մի շարք նորմեր, որոնք իրավական հիմք են երեխայի իրավունքների ոլորտում ծագող իրավահարաբերությունների կարգավորման համար:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Կամ՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը, որը նվիրված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին, սահմանում է երեխայի իրավունքների ճնշող մեծամասնությունը (կյանքի իրավունքը, առողջության պահպանման իրավունքը, բռնութ-

յունից պաշտպանության իրավունքը, կրթության իրավունքը, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքները և այլն):

Մեր երկրի Հիմնական օրենքը հատուկ հոգածություն է ցուցաբերում նաև մանկության նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության հոդված 48-րդ հոդվածը ամրագրում է, որ «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը…»:

Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրությունը, որպես մեր պետության հիմնական օրենք, կարգավորում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները (այդ թվում՝ և երեխայի իրավունքների պաշտպանության), բոլոր օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը չպետք է հակասեն Սահմանադրությանը, իսկ հակասության դեպքում տվյալ նորմատիվ իրավական ակտը կամ պետք է անվավեր ճանաչվի, կամ էլ ենթարկվի համապատասխան փոփոխությունների:

§2. Միջազգային պայմանագրեր

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում նաև միջազգային պայմանագրերը:

Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ընդունվել են բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնք բովանդակում են երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ կարևորագույն դրույթներ և որոնք վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից: Դրանց շարքում կարելի է առանձնացնել հետևյալ միջազգային փաստաթղթերը.

1989 թվականի նոյենբերի 20-ի՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրությունը, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը, 2000 թվականի մայիսի 25-ին Նյու Յորք քաղաքում ստորագրված՝ Երեխայի իրավունքների մասին

կոնվենցիային կից՝ Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը, 1999 թվականի հունիսի 17-ին Ժնև քաղաքում ստորագրված՝ Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիան, 1993 թվականի մայիսի 29-ին Հաագա քաղաքում ստորագրված «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիան, 1980 թվականի հոկտեմբերի 25-ին Հաագա քաղաքում ստորագրված՝ Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին կոնվենցիան, 1996 թվականի հոկտեմբերի 19-ին Հաագա քաղաքում ստորագրված՝ Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին կոնվենցիան:

§3. ՀՀ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր

Նորմատիվ իրավական ակտերի շարքում կարևոր նշանակություն ունի օրենքը:

Օրենքն օրենսդիր մարմնի կողմից ընդունված առաջնային, իրավաբանական բարձրագույն ուժով օժտված նորմատիվ իրավական ակտն է, որը կարգավորում է որոշակի հասարակական հարաբերություններ: Օրենքները բխում են Սահմանադրությունից և լիովին պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:

Երեխայի իրավունքների պաշտպանության առումով կարևոր նշանակություն ունի «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1996թ. մայիսի 29-ին և ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

Նշված օրենքը սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

Բացի նշված օրենքից, ՀՀ-ում գործում են բազմաթիվ այլ օրենքներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են երեխայի իրավունքներին

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը, «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և այլն), որոնց սույն ձեռնարկում կանդրադառնանք առանձին առանձին:

Մյուս բոլոր նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվում են գործադիր իշխանության բարձրագույն մարմինների (Նախագահ, կառավարություն) կողմից, կոչվում են ենթաօրենսդրական ակտեր (հրամանագրեր, որոշումներ, կարգադրություններ):

Ենթաօրենսդրական ակտերը չպետք է հակասեն Սահմանադրությանը և օրենքներին, հակառակ դեպքում դրանք ենթակա են վերացման:

ՀՀ-ում կան բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր (կառավարության որոշումներ, ՀՀ Նախագահի հրամանագրեր), որոնք վերաբերում են երեխայի իրավունքների ոլորտին և շոշափում են երեխաների շահերը (12.02.2000թ. ՀՀ կառավարության ընդունած թիվ 64 որոշումը՝ երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի N 922-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, ՀՀ աշխատանքի վարձատրության նվազագույն չափի, երեխաներին տրվող նպաստների չափերի բարձրացման մասին ՀՀ նախագահի հրամանագիրը և այլն):

Բաժին 2
ՀՀ օրենսդրությունը որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

§1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

Երեխայի իրավունքների երաշխիք ասելով հասկանում ենք այն իրավական միջոցները, որոնք ապահովում են երեխայի այս կամ այն իրավունքի իրացումը: Իրավունքի իրականացումը կարող է ապահովվել, առաջին հերթին, այն դեպքում, երբ այդ իրավունքին համապատասխանում է ինչ-որ մեկի պարտականությունը:

Այս տեսանկյունից երեխայի իրավունքներին համապատասխանում է պետության պարտականությունը, որի գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք հանդիսանալ երեխայի իրավունքների ապահովման համար:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո:

Նշված օրենքը սահմանում է. որ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

Երեխայի բնական և անօտարելի իրավունքներից է կյանքի իրավունքը: Դա նշանակում է, որ ոչ ոք՝ ոչ պետությունը (պետական մարմինները), ոչ անհատ քաղաքացիները չեն կարող կամայականորեն երեխային զրկել կյանքից:

Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար:

Երեխայի կյանքի պաշտպանությունն իրականացվում է մի շարք ուղղություններով: Դրանցից մեկը պետության համապատասխան քաղաքականությունն է:

ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի 1116-Ն որոշմամբ հաստատվել է «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները», համաձայն որի՝ հղիության արհեստական ընդհատման վիրահատություն թույլատրվում է կատարել մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը, բոլոր այն կանանց, ովքեր ցանկանում են ընդհատել հղիությունը և չունեն հակացուցումներ:

Միաժամանակ, նշված կարգից թույլատրվում է կատարել բացառություն՝ հղիության արհեստական ընդհատումը կատարել մինչև 22 շաբաթական ժամկետը՝ համապատասխան բուժհանձնաժողովի որոշմամբ:

Իսկ մինչև 22 շաբաթական ժամկետը հղիության արհեստական ընդհատումը թույլատրվում է նաև հետևյալ դեպքերում.

ա) հղիության ընթացքում ամուսնու մահվան,

բ) կնոջ կամ ամուսնու ազատազրկման վայրում գտնվելու,

գ) հղիության ժամանակ մայրական իրավունքից զրկվելու,

դ) հղիությունը բռնաբարությունից հետո:

Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման, ամրապնդման իրավունք և քաղաքացիության իրավունք:

Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:

Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:

Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն:

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլն) բռնությունից պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլեխաղերից և նրա իրավունքների ու օրինական շահերի այլ ոտնահարումից:

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Կրթությունը հասարակության տնտեսական, հոգևոր և սոցիալական առաջընթացի հիմնական միջոցն է: Կրթություն ասելով՝ հասկացվում է անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և նոր սերունդներին փոխանցելու գործին:

Կրթության իրավունքը՝ անձի իրավունքն է՝ ստանալու որոշակի գիտելիքներ, մշակութային դաստիարակություն և պրոֆեսիոնալ կողմնորոշում՝ ժամանակակից հասարակության բնականոն կենսագործունեության համար:

Պետական համապատասխան մարմիններն ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն:

Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր երեխա ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք օրենքով սահմանված կարգով:

Հայ իրականության մեջ միշտ էլ ընտանիքը եղել և մնում է որպես պետության հենարանը, ուստի գտնվում է հասարակության ուշադրության և հոգածության կենտրոնում: Պատմականորեն մեր ժողովր-

դի կողմից միշտ էլ գիտակցվել է այն հանրահայտ իրողությունը, որ առողջ ընտանիքը պետության հզորության երաշխիքն է, իսկ երեխայի իրավունքների և շահերի իրականացումը հնարավոր է ապահովել առողջ ընտանիքի առկայության պայմաններում:

Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:

Բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից:

Յուրաքանչյուր երեխա (ներառյալ որդեգրված) ծնողի մահվան, ինչպես նաև դատարանի վճռով ծնողին մեռած հայտարարելու դեպքում, անկախ բնակության վայրից, ունի ժառանգություն ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու և գեղարվեստական, գիտական ու տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մասնակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսևորելու իրավունք: Այդ նպատակով պետությունը խրախուսում է ֆիլմերի և տեսաֆիլմերի, հեռուստահաղորդումների թողարկումը, մանկական թերթերի, ամսագրերի, գրքերի հրապարակումը, ապահովում է դրանց մատչելիությունը:

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշ-

խատանքային պայմանագրերի: Իսկ մինչև 16 տարեկան երեխաները կարող են ընդունվել ժամանակավոր աշխատանքի՝ ծնողներից մեկի (որդեգրողի) կամ հոգաբարձուի (խնամակալի) և խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե դա չի խանգարում նրանց ուսուցման գործընթացին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացիները:

Մինչև տասնչորս տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ նրանց աշխատանքի ներգրավելը արգելվում է:

Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք, որը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Աշխատանքային օրենսգրքի 257-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև 18 տարեկան անձինք չեն կարող ներգրավվել կատարելու՝

1. ծանր աշխատանքներ.
2. թունավոր, քաղցկեղածին կամ առողջության համար վտանգավոր գործոնների ազդեցությամբ արտադրություններում աշխատանքներ.
3. աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ հնարավոր է իոնացված ռադիացիայի ազդեցությունը.
4. աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ առկա է դժբախտ պատահարների կամ մասնագիտական հիվանդություններով հիվանդանալու մեծ հավանականություն, ինչպես նաև աշխատանքներ, որոնց անվտանգ իրականացումը պահանջում է բարձր զգոնություն կամ փորձառություն:

Սույն հոդվածում նշված ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները խրախուսում են երեխայի հանգստի և ժամանցի կազմակերպումը՝ ստեղծելով արտադպրոցական, մանկապատանեկան, մշակութային, մարզական, հանգստի և առողջության ամրապնդմանն ուղղված հաստատություններ:

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք: Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Արգելվում է երեխային մասնակից դարձնել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությանը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը: Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին:

Զինված հակամարտությունների ժամանակ պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը խախտող անձինք, պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երեխայի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, յուրաքանչյուր պետություն պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի նորածինների և մանկական մահացության մակարդակն իջեցնելու համար, երեխաների առողջության պահպանումն ու անհրաժեշտ բժշկական օգնության տրամադրումն ապահովելու համար, առողջության պահպանման առումով մայրերին նախածննդյան և հետծննդյան շրջանում պատշաճ ծառայություններ տրամադրելու համար, երեխաների սննդի և առողջության, կրծքով կերակրելու առավելությունների, հիգիենայի, երեխայի բնական միջավայրի սանիտարիայի և դժբախտ պատահարները կանխելու մասին հասարակության բոլոր խավերի, մասնավորապես ծնողների և երեխաների իրազեկությունն ապահովելու համար, լուսավորչական աշխատանքի և կանխարգելիչ

բժշկական օգնության բնագավառում ծառայությունների զարգացման և ընտանիքի չափերի պլանավորման համար:

Երեխաների առողջության պահպանման համար պետությունը պարտավոր է իրականացնել լայն սանիտարահամաճարակային միջոցառումներ: Դա նշանակում է, որ պետական առողջապահական հիմնարկները պարտավոր են պարբերաբար ստուգել երեխաների առողջական վիճակը (մանկապարտեզներում, ուսումնական հաստատություններում և այլուր): Որոշ հիվանդությունների կանխարգելման նպատակով կատարվում են նաև երեխաների պարտադիր պատվաստումներ:

Ամփոփելով՝ նշենք, որ պետությունները պետք է ձեռնարկեն ցանկացած արդյունավետ և անհրաժեշտ միջոց երեխաների առողջության վրա բացասաբար ազդող ավանդական սովորույթների վերացման նպատակով:

§2. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը:

Այս օրենքի դրույթները տարածվում են ինչպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, այնպես էլ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց վրա:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև դատարանի կողմից ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

Իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև դատարանի կողմից ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակներն են՝ ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների՝ ՀՀ Սահմանադրությամբ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ամրագրել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի հիմնական երաշխիքները, իրավունքների խախտման դեպքում վերականգնել դրանք, ինչպես նաև չթույլատրել նրանց նկատմամբ որևէ խտրականություն, ձևավորել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական հիմքերը, նպաստել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգևոր զարգացմանը, հասարակության մեջ նրանց ինտեգրմանը, հայրենասիրական ոգով դաստիարակմանը, ինչպես նաև կանխարգելել սոցիալական դժվարությունների առաջացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, որոնք ընդգրկում են հանրակրթական, մրցութային կարգով միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն, անվճար բժշկական օգնություն և սպասարկում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սննդի ապահովում՝ սննդի նվազագույն չափորոշիչներին համապատասխան, երեխաների առողջության վերականգնում և հանգստի կազմակերպում, 16 տարին լրացած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար մասնագիտական կողմնորոշում, գործունեության բնագավառի ընտրություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորում, աշխատանքի պաշտպանություն, սոցիա-

լական աջակցության՝ սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման միջոցառումներ, բնակարանի իրավունքի ապահովում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնության ցուցաբերում:

Հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասընթացներ ընդունվում և սովորում են անվճար:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ընդհանուր մրցույթով պետական միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է անվճար բժշկական օգնություն պետական պատվերի շրջանակներում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին կարող են տրամադրվել մարզական-առողջարարական ճամբարների, հանգստյան տների, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում՝ առողջարանային բուժման ուղեգրեր՝ պետական և համայնքային բյուջեներից այդ նպատակով նախատեսված միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հան-

ռապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատազրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը:

18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխանող բնակելի տարածություն:

§3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատված է ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 983-Ն որոշմամբ, համաձայն որի սահմանվում է, որ՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բնակելի տարածություն գնելու միջոցով: Գնումների պատվիրատուն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է.

բ) նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխանում է մեկսենյականոց բնակարանի կամ բնակելի տան (բնակարանում) մեկ սենյակի չափով առանձնացված բնակելի տարածությունը.

գ) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է բնակարան՝ անհատույց օգտագործման իրավունքով՝

10 տարի ժամկետով, որը հետագայում կարող է մասնավորեցվել օրենքով սահմանված կարգով կամ տրվել վարձակալության.

դ) «ա» ենթակետով սահմանված կարգով գնված բնակարանները հանձնվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը,

ե) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգի գործողությունը տարածվում է նաև մանկատան 1991-1998 թվականների շրջանավարտների վրա:

Բնակարանի կարիք ունեցող անձանց հաշվառումն իրականացնում է նրանց փաստացի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը:

Բնակարանի կարիք ունեցող են համարվում այն անձինք, ովքեր չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարվա ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, գտնվում կամ բնակվում են բուժական, դաստիարակչական, խնամակալական կազմակերպություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, կամ զորացրվել են ժամկետային զինվորական ծառայությունից, կամ վերադարձել են ազատազրկման վայրերից:

Բնակարանի կարիք ունեցող անձինք հաշվառման վերցնելու մասին դիմումը ներկայացնում են փաստացի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմին:

Դիմումին կցվում է որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքը, իսկ 1985-1990 թվականներին ծնված անձինք՝ առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքը, վերջին 5 տարվա ընթացքում բնակարան կամ բնակելի տարածություն օտարած չլինելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տեղեկանքը և փաստացի բնակության վայրի մասին տեղեկանքը:

Դիմումները գրանցվում են բնակարանի կարիք ունեցող անձանց դիմումների հաշվառման ընդհանուր մատյանում:

Տեղական ինքնակառավարման մարմինը դիմումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում դիմումի պատճենը և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթն ուղարկում է տվյալ տարածքն սպասարկող սոցիալական ծառայության տարածքային գործակալություն:

Բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանային պայմանները մանրակրկիտ ուսումնասիրում է սոցիալական ծառայության տարածքային գործակալության՝ առնվազն 3 անձից բաղկացած հանձնաժողովը, որի կազմում կարող են ընդգրկվել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, և կազմում է համապատասխան ակտ:

Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտը և ստացված փաստաթղթերն ուղարկում է տեղական ինքնակառավարման մարմին:

Հաշվառման վերցնելու մասին դիմումները նրանց բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտի և մյուս անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ մեկամսյա ժամկետում քննության են առնվում (անհրաժեշտության դեպքում՝ դիմողների ներկայությամբ) համայնքի ավագանու նիստում:

Բնակարանի կարիք ունեցող անձինք հաշվառման են վերցվում համայնքի ավագանու (որի նիստին կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ) որոշմամբ: Դիմողները մեկշաբաթյա ժամկետում գրավոր տեղեկացվում են ընդունված որոշման մասին: Հաշվառման վերցնելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Հաշվառման վերցված՝ բնակարանի կարիք ունեցող անձանց գրանցում են տեղական ինքնակառավարման մարմնի՝ բնակարանի կարիք ունեցող անձանց հաշվառման մատյանում, որը պետք է լինի համարակալված, թելակարված և տեղական ինքնակառավարման մարմնի կնիքով կնքված:

Հաշվառման վերցված՝ բնակարանի կարիք ունեցող յուրաքանչյուր անձի համար ստեղծվում է հաշվառման գործ, որում պահվում են

փաստաթղթերը: Գործում գտնվող փաստաթղթերի ցանկն ստորագրում են հաշվառման վերցված՝ բնակարանի կարիք ունեցող անձինք:

Հաշվառման գործերի համարները պետք է համընկնեն հաշվառման մատյանում գրանցված անձանց ազգանունների դիմաց նշված համարներին:

Բնակարանի կարիք ունեցող անձանց բնակելի տարածություն հատկացվելուց հետո հաշվառման գործերը պահվում են օրենքով սահմանված կարգով և ժամկետով:

Բնակարանի կարիք ունեցող անձինք բնակարանային հաշվառումից հանվում են՝

ա) բնակարանով ապահովվելու,

բ) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, այլ պետություն մշտական բնակության փոխադրվելու,

գ) բնակարանի կարիք ունենալու մասին կեղծ տեղեկություններ ներկայացնելու,

դ) երկրորդ անգամ հատկացված բնակարանից հրաժարվելու դեպքերում:

Հաշվառումից հանելու հարց առաջանալու դեպքում՝ բնակարանի կարիք ունեցող անձը հրավիրվում է մասնակցելու համայնքի ավագանու նիստին, որտեղ որոշվում է նրան հաշվառումից հանելու հարցը: Բնակարանի կարիք ունեցող անձի՝ անհարգելի պատճառով նիստին չներկայանալը չի կարող խոչընդոտել հարցի լուծմանը: Բնակարանի կարիք ունեցող անձն ընդունված որոշման մասին տեղեկացվում է գրավոր:

Տեղական ինքնակառավարման մարմիններում կազմվում են հաշվառման վերցված՝ բնակարանի կարիք ունեցող անձանց ցուցակները՝ ըստ հետևյալ առաջնահերթության՝

ա) 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող անձինք,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ,

գ) 2 անչափահաս երեխա ունեցող անձինք,

դ) մեկ անչափահաս երեխա ունեցող անձինք,

ե) միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտածներ,

զ) բնակության համար ոչ պիտանի վայրերում բնակվողներ,

է) ժամկետային զինվորական ծառայություն անցածներ,

ը) ժամանակավոր կացարաններում բնակվողներ,

թ) ազգականների մոտ բնակվողներ,

ժ) վարձով բնակվողներ,

ժա) ազատազրկման վայրերից վերադարձածներ,

ժբ) բնակարանի կարիք ունեցող մյուս անձինք:

Նշված ցուցակները հաստատվում են համայնքի ղեկավարի կողմից և դրանց մեկ օրինակը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մյուսը պահվում է տեղական ինքնակառավարման մարմնում:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված հերթացուցակների հիման վրա կազմում է հանրապետական հերթացուցակ:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանրապետական հերթացուցակի մեկ օրինակը և հաջորդ տարվա ընթացքում բնակարանների ձեռքբերման համար անհրաժեշտ բյուջետային ֆինանսավորման հայտը Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ հաջորդ տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

Բնակարանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավարները բնակարանի կարիք ունեցող անձի հետ կնքում են պայմանագիր:

Բնակարանի կարիք ունեցող անձը պարտավոր է պայմանագրի կնքումից հետո 30 օրվա ընթացքում զբաղեցնել իրեն տրամադրված բնակարանը:

Բաժին 3
Որդեգրում (դստերագրում)

§1. Որդեգրման (դստերագրման) հասկացությունն ու պայմանները

Որդեգրումը ծնողներ չունեցող կամ թեկուզ հարազատ ծնողներ ունեցող, սակայն նրանցից պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների խնամքն ու դաստիարակությունն այլ ընտանիքում կազմակերպելու իրավական միջոց է:

Որբացած կամ տարբեր պատճառներով ծնողներից պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների համար որդեգրման միջոցով ստեղծվում են ապրելու բարենպաստ պայմաններ և դաստիարակության ու խնամքի իրական հնարավորություններ: Որդեգրումը շոշափելի դեր է կատարում նաև ընտանիքի ամրապնդման գործում: Ձգալի թվով ամուսնություններ երեխա չունենալու պատճառով դադարում են: Իսկ ուրիշի երեխա որդեգրելը կանխում է ընտանիքի քայքայումը: Դրա հետ մեկտեղ, որդեգրման շնորհիվ դրսևորվում է նաև մարդկանց հայրենասիրական վերաբերմունքն անօթևան երեխաների նկատմամբ, որոնք որդեգրելով նրանց՝ դրանով իսկ ստանձնում են պետության հոգսի մի մասը, իրական օգնություն ցույց տալիս պետությանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին դաստիարակելու գործում:

Որդեգրումն իրավական հին ինստիտուտ է: Այն հայտնի էր դեռևս Հին Հռոմի քաղաքացիական իրավունքին: Ներկայումս այն հայտնի է ժամանակակից իրավական բոլոր համակարգերին: Սակայն այդ ինստիտուտի կիրառման նպատակները տարբեր հասարակարգերում տարբեր են:

Ներկայումս մեր երկրում որդեգրման ինստիտուտը բացառապես հետապնդում է բարի ու մարդասիրական նպատակ: Մեր օրենքները թույլատրում են որդեգրել միայն անչափահաս երեխաների և դրա հնարավորությունը չեն կապում սեփական երեխաների առկայության կամ բացակայության հետ: Իսկ ահա արտասահմանյան շատ երկրների օրենսդրությամբ թույլատրվում է երեխա որդեգրել միայն սեփական երեխայի բացակայության դեպքում, քանի որ շատ դեպքերում

որդեգրում է կատարվում՝ հետապնդելով զուտ գույքային նպատակներ:

Որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

Որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման նախապատվելի ձևը:

Որդեգրում թույլատրվում է միայն երեխաների նկատմամբ և ելնելով նրանց շահերից, ինչպես նաև հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները:

Չի թույլատրվում եղբայրների ու քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որդեգրումը ելնում է երեխաների շահերից:

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխաների որդեգրումը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ հնարավորություն չկա այդ երեխաներին Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որդեգրելու: Օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ տրամադրվում են նշված երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելուց երեք ամիս հետո:

Որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ:

Որդեգրված երեխայի և որդեգրողի (որդեգրողների) իրավունքներն ու պարտականությունները ծագում են որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Դատարանը պարտավոր է երեխայի որդեգրումը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճռի քաղվածքն ուղարկել ըստ վճիռ կայացնելու վայրի՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Ամուսնության մեջ չգտնվող անձինք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային:

Ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս:

Երեխային որդեգրելու համար նրա ծնողների համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ՝

ա) նրանք անհայտ են կամ դատարանը ճանաչել է անհայտ բացակայող.

բ) դատարանը նրանց ճանաչել է անգործունակ.

գ) դատարանը նրանց զրկել է ծնողական իրավունքներից.

դ) նրանք դատարանով անհարգելի ճանաչված պատճառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում և խուսափում են նրան դաստիարակելուց ու պահելուց:

Տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը: Եթե մինչև որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունն ստանալու:

Որդեգրված երեխայի համար կարող է պահպանվել նրա անունը, հայրանունը և ազգանունը:

Որդեգրված երեխայի հայրանունը որոշվում է որդեգրողի անունով, եթե որդեգրողը տղամարդ է, իսկ երեխան կնոջ կողմից որդեգրվելիս՝ նրա կողմից որպես որդեգրված երեխայի հայր նշված անձի անունով:

Որդեգրողի խնդրանքով որդեգրված երեխային տրվում է որդեգրողի ազգանունը, ինչպես նաև նրա նշած անունը:

Եթե որդեգրող ամուսինների ազգանունները տարբեր են՝ որդեգրող ամուսինների համաձայնությամբ որդեգրված երեխային տրվում է նրանցից մեկի ազգանունը:

Որդեգրման գաղտնիքն ապահովելու համար որդեգրողի խնդրանքով կարող են փոփոխվել որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս, ինչպես նաև նրա ծննդյան վայրը: Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի փոփոխում թույլատրվում է միայն մինչև մեկ տարեկան երեխա որդեգրելիս:

§ 2. Որդեգրման կարգը

Որդեգրման գործընթացը կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարության 2000 թվականի փետրվարի 12-ի N 64 որոշմամբ հաստատվել է երեխայի որդեգրման կարգը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի որդեգրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ երեխայի որդեգրման կարգի և այլ իրավական ակտերի համաձայն:

Որդեգրվում են այն անչափահաս երեխաները, ովքեր երեխայի որդեգրման կարգին համապատասխան հաշվառված են որպես որդեգրման ենթակա երեխաներ:

Իսկ որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են այն անչափահաս երեխաները, որոնց որդեգրման համար առաջացել են իրավական հիմքեր:

Որդեգրումն առաջանում է այն անչափահաս երեխաների նկատմամբ, որոնց միակ ծնողը կամ երկու ծնողները՝

ա) մահացել են,

բ) զրկված են ծնողական իրավունքներից,

գ) դատական կարգով ճանաչվել են անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

դ) տվել են որդեգրման գրավոր համաձայնություն,

ե) մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն բնակվում և, չնայած խնամակալության և հոգաբարձության մարմինների նախազգուշացմանը, խուսափում են երեխայի դաստիարակությունից ու խնամքից, երեխայի նկատմամբ չեն դրսևորում ծնողական հոգատարություն և ուշադրություն,

ե.1) անհայտ են (ընկեցիկ երեխաներ).

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Ընկեցիկ երեխաները կարող են որդեգրման հանձնվել ոստիկանության ներկայացրած համապատասխան ակտի առկայության դեպքում՝ ընկեցիկության ակտը կազմվելուց հետո 3 ամսից ոչ շուտ:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հաշվառման վերցնելուց հետո 5-օրյա ժամկետում նշված երեխաների մասին տեղեկատվություն են տրամադրում համապատասխան մարզպետարանին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին:

Որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են նաև այն երեխաները, որոնց ծնողները տվել են գրավոր համաձայնություն իրենց երեխայի որդեգրման համար:

Որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկատվություն ստանալով՝ մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը լրացնում է երեխայի անձնական քարտը՝ նրան վերցնելով հաշվառման՝ որպես որդեգրման ենթակա երեխա:

Հաշվառման պահից եռօրյա ժամկետում մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի պատճենը փոխանցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որը դրա հիման վրա իրականացնում է որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառումը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը եռօրյա ժամկետում՝ որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկացնում է համապատասխան մարզպետարանին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որդեգրման ենթակա երեխաների մասին

տեղեկությունները տրամադրում է հանրապետական հանձնաժողովին, մարզպետարանին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին, ինչպես նաև իրավասու մարմիններին՝ նրանց գրավոր հարցման հիման վրա:

Որդեգրման ենթակա երեխայի մասին տեղեկություններ ստանալու նպատակով որդեգրողի թեկնածուն պետք է դիմի իր բնակության վայրի մարզպետարանին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին (օտարերկրյա քաղաքացին՝ հանրապետական հանձնաժողովին):

Ստացված տեղեկությունների հիման վրա որդեգրողի թեկնածուի կողմից որդեգրման ենթակա երեխա ընտրելու դեպքում Հանրապետական հանձնաժողովը, մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տեղեկացնում է դրա մասին, և եթե այլ որդեգրողի թեկնածու ընտրված երեխային որդեգրելու ցանկություն չի հայտնել, ապա կազմակերպում է որդեգրման ենթակա երեխայի և որդեգրողի թեկնածուի հանդիպումը:

Որդեգրողի թեկնածուի և որդեգրման ենթակա երեխայի ծնողների միջև գրավոր նախնական համաձայնության առկայության դեպքում որդեգրման ենթակա երեխայի տվյալներն այլ անձանց չեն տրամադրվում: Որդեգրողի թեկնածուի կողմից այդ երեխայի որդեգրումից հրաժարվելու դեպքում որդեգրման ենթակա երեխան հանվում է հաշվառումից:

Օտարերկրյա քաղաքացիներին որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ տրվում են նշված երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելուց 3 ամիս հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող երեխայի խորթ մայրը, խորթ հայրը, նրա ազգականները կամ երբ երեխայի ծնողների և որդեգրել ցանկացող անձի միջև սահմանված կարգով առկա է գրավոր նախնական համաձայնություն:

Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխայի կապակցությամբ ցանկություն են հայտնել մեկից ավելի որդեգրողի թեկնածուներ, ապա երեխայի հետ նրանցից առաջինի հանդիպումը կազմակերպվում է ըստ նրանց կենտրոնացված հաշվառման հերթականության: Մյուս որդեգրողի թեկնածուների հետ երեխայի հանդիպումը կազմա-

կերպվում է այն դեպքում, եթե առաջին որդեգրողի թեկնածուն 15 օրվա ընթացքում ցանկություն չի հայտնում տվյալ երեխային որդեգրելու մասին:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն և օտարերկրյա քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկությամբ դիմել են նույն օրը, ապա երեխայի հետ հանդիպման առաջնահերթությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուին: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուի հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն 15 օրվա ընթացքում տվյալ երեխային որդեգրելու ցանկություն չի հայտնել:

Տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային ընտրելու դեպքում Հանրապետական հանձնաժողովը, մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը եռօրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ապահովում է ընտրված որդեգրման ենթակա երեխայի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կասեցումը՝ մինչև համապատասխան համայնքի ղեկավարի՝ այդ երեխայի ընտրած որդեգրողի թեկնածուի կողմից որդեգրելու մասին որոշում ընդունելը:

Տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային որդեգրելուց հրաժարվելու դեպքում որդեգրողի թեկնածուն հաշվառումից չի հանվում:

Որդեգրողի թեկնածուն իրավունք ունի Հանրապետական հանձնաժողովից, մարզպետարանից, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանից ստանալու անհրաժեշտ տեղեկություններ որդեգրման ենթակա երեխայի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների մասին, որդեգրվող երեխայի առողջական վիճակի զննման նպատակով դիմելու բժշկական հաստատություն՝ երեխայի օրինական ներկայացուցչի մասնակցությամբ:

Որդեգրող թեկնածուն պարտավոր է անձամբ՝ մինչև որդեգրման մասին որոշում ընդունելը, ծանոթանալ և շփվել որդեգրվող երեխայի հետ, ծանոթանալ որդեգրվող երեխայի փաստաթղթերին:

Ստորև ներկայացվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի և որդեգրել ցանկացող անձի անձնական քարտի ձևերը:

(լուսանկար)

ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՐՏ N

_____
հանձնաժողովը

Լրացնելու ժամանակը _____
(տարեթիվը, ամիսը, օրը)

Տվյալներ երեխայի մասին (լրացնելու պահի դրությամբ)

_____
(անունը, ազգանունը, հայրանունը)

Սեռը _____, ծննդյան ժամանակը _____
(տարեթիվը, ամիսը, օրը)

Ազգությունը _____

Սոցիալական վիճակը՝ որբ է, մնացել է առանց ծնողական խնամքի, ընկեցիկ է (ընդգծել)

Ծննդյան վայրը_____

Ծննդյան վկայական _____ N _____

Ծննդյան վկայականը տալու ժամանակը _____
(տարեթիվը, ամիսը, օրը)

Երեխայի հատուկ նշանները _____
(հասակը, քաշը, աչքերի գույնը, մազերի գույնը աչքի ընկնող հատկանիշները)

Բնութագրիչ առանձնահատկությունները _____
(շփվող, ինքնամփոփ և այլն)

Գտնվելու վայրը_____

Բժշկական եզրակացություն առողջական վիճակի մասին

_____

_____

Տեղեկություններ ծնողների մասին՝ լրացնելու պահի դրությամբ

Մայրը_____
(անունը, ազգանունը, հայրանունը)

Ծնվել է « »_____20 թ.

Գտնվելու վայրը _____

Սոցիալական տեղեկանք _____

(աշխատանքի վայրը, առողջական վիճակը. նորմալ է, քրոնիկ հիվանդ է, հաշմանդամ է)

Հայրը_____

(անունը, ազգանունը, հայրանունը)

Ծնվել է « »_____20 թ.

Գտնվելու վայրը _____

Սոցիալական տեղեկանք _____

(աշխատանքի վայրը, առողջական վիճակը, նորմալ է, քրոնիկ հիվանդ է, հաշմանդամ է)

Եղբայրներ, քույրեր, այլ ազգականներ _____

(անունները, ազգանունները, հայրանունները, գտնվելու վայրը)

_____

_____

Որդեգրման հանձնելու իրավական հիմքերը _____

(ծնողի (ծնողների) մահվան վկայականը (վկայականները), ակտ երեխայի ընկեցիկ լինելու մասին, ծնողներին ծնողական իրավունքից զրկելու վերաբերյալ դատարանի վճիռը, որդեգրելու համար գրավոր համաձայնությունը եւ այլն)

Լրացուցիչ տեղեկություններ _____

Անձնական քարտը լրացրել է _____

(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

(լուսանկար)

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՐՏ N

_____

հանձնաժողովը

Լրացնելու ժամանակը _____

(տարեթիվը, ամիսը, օրը)

Տվյալներ երեխայի մասին (լրացնելու պահի դրությամբ)

_____

(անունը, ազգանունը, հայրանունը)

Սեռը _____, ծննդյան ժամանակը _____

(տարեթիվը, ամիսը, օրը)

Քաղաքացիությունը _____

Ազգությունը _____

Ծննդյան վայրը _____

Անձնագիրը ___ N _____

Անձնագիրը տալու ժամանակը _____

(տարեթիվը, ամիսը, օրը) (ում կողմից)

Բնակության վայրը _____

Աշխատանքի վայրը (պաշտոնը) _____

Ընտանեկան դրությունը_____
(ամուսնացած է, ամուրի է և այլն)
Առողջական վիճակը _____
(նորմալ է, քրոնիկ հիվանդ է, հաշմանդամ է և այլն)
Ցանկալի երեխայի մասին տվյալներ _____
(սեռը, տարիքը, թիվը, արտաքինը և այլ առանձնահատուկ հատկանիշներ)
Լրացուցիչ տեղեկություններ
Անձնական քարտը լրացրել է _____
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրությունը)

§3. Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց որդեգրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի հաշվառման կարգը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 150-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2005թ. ապրիլի 21-ի N 623-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց որդեգրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի հաշվառման կարգը, համաձայն որի՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրյա քաղաքացիներ) կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի (այսուհետ՝ որդեգրված երեխա) հաշվառումն իրականացնում է որդեգրողների մշտական բնակության վայրում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը:

Որդեգրված երեխայի հաշվառմանը վերաբերող փաստաթղթերը որդեգրողները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի հյուպատոսական վարչություն:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի հյուպատոսական վարչությունը որդեգրված

երեխայի հաշվառման մասին փաստաթղթերն ուղարկում է որդեգրողների մշտական բնակության վայրում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

Որդեգրողների մշտական բնակության վայրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի բացակայության դեպքում որդեգրված երեխաների հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի հյուպատոսական վարչությունը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի հյուպատոսական վարչությունն իրականացնում է որդեգրված երեխաների տվյալների կենտրոնացված հաշվառումը:

Որդեգրված երեխայի հաշվառումն իրականացվում է որդեգրումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Որդեգրված երեխային հաշվառելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում երեխային հաշվառելու մասին,

բ) դատարանի որոշումը երեխայի որդեգրման մասին,

գ) երեխայի որդեգրման վկայականը,

դ) երեխայի ծննդյան վկայականը,

ե) երեխայի 2 լուսանկար,

զ) որդեգրողների անձի ինքնությունը հավաստող փաստաթղթերը:

Որդեգրված երեխայի մասին տվյալները գրանցվում են որդեգրված երեխայի հաշվառման մատյանում, ինչպես նաև այդ երեխայի անձնական քարտում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա որդեգրած օտարերկրյա քաղաքացիները մինչև երեխայի չափահաս դառնալը՝ տարեկան մեկ անգամ երեխայի հաշվառումն իրականացնող մարմին են ներկայացնում երեխայի առողջական վիճակի և կենսապայմանների մասին տեղեկատվություն՝ տրված և հաստատված նրանց մշտական բնակության վայրի համապատասխան իրավասու մարմինների կողմից:

Որդեգրողներն իրենց մշտական բնակության վայրը փոխելու դեպքում մեկ ամսվա ընթացքում դրա մասին տեղեկացնում են երեխայի հաշվառումն իրականացնող համապատասխան մարմնին:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները պարբերաբար Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի հյուպատոսական վարչություն են ներկայացնում որդեգրված երեխաների մասին ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկացնում են որդեգրված երեխաների իրավունքների ու օրինական շահերի խախտման և որդեգրող ընտանիքների անբարենպաստ պայմանների մասին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ու Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի հյուպատոսական վարչությունը յուրաքանչյուր կիսամյակ փոխանակում են տեղեկատվություն որդեգրված երեխաների մասին:

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՐԴԵԳՐԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՐԵԽԱՅԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում ենք հաշվառման վերցնել մեր որդուն (դստերը)՝

_____

(երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝ մինչև որդեգրումը)

_____

(երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝ որդեգրումից հետո)

_____

(երեխայի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը)

Որդեգրման վերաբերյալ որոշումը կայացվել է _____ դատարանի կողմից_____

(որոշման համարը, կայացման օրը, ամիսը, տարեթիվը)

Որդեգրման վերաբերյալ ակտը գրանցվել է_____ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնում_____

(ակտի գրանցման համարը, օրը, ամիսը, տարեթիվը)

Ծննդյան վկայականի սերիան, համարը _____
Որդեգրման վկայականի սերիան, համարը _____
Մեր մասին հայտնում ենք հետևյալ տեղեկությունները՝
Որդեգրող հայր _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը)

_____
(մշտական բնակության վայրը)

_____
(աշխատանքի վայրը և զբաղեցրած պաշտոնը)

_____
(անձնագրի սերիան և համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Որդեգրող մայր _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը)

_____
(մշտական բնակության վայրը)

_____
(աշխատանքի վայրը և զբաղեցրած պաշտոնը)

_____
(անձնագրի սերիան և համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

_____ _____
(որդեգրող հոր ստորագրությունը) (որդեգրող մոր ստորագրությունը)

« » _____ 20 թ.

ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՐՏ N _____
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՐԴԵԳՐԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՐԵԽԱՅԻ

ՀՀ դեսպանության հյուպատոսական բաժին_____
(նշել երկիրը)

Լուսանկար

_____
(երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝ մինչև որդեգրումը)

_____
(երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝ որդեգրումից հետո)

_____
(երեխայի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը)

Որդեգրման վերաբերյալ որոշումը կայացվել է_____ դատարանի կողմից _____
(որոշման համարը, կայացման օրը, ամիսը և տարեթիվը)

Որդեգրման վերաբերյալ ակտը գրանցվել է_____ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնում _____
(ակտի գրանցման համարը, օրը, ամիսը, տարեթիվը)

Ծննդյան վկայականի սերիան, համարը _____

Որդեգրման վկայականի սերիան, համարը _____

Տեղեկություններ որդեգրող հոր մասին_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը)

_____
(մշտական բնակության վայրը)

_____
(աշխատանքի վայրը և զբաղեցրած պաշտոնը)

_____
(անձնագրի սերիան և համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Տեղեկություններ որդեգրող մոր մասին_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը)

_____
(մշտական բնակության վայրը)

_____
(աշխատանքի վայրը և զբաղեցրած պաշտոնը)

_____
(անձնագրի սերիան և համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Պատասխանատու պաշտոնյա _____
(ստորագրությունը)

_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(պաշտոնը)

« » _____ 200 թ.
Կ.Տ.

§4. Որդեգրել ցանկացող անձանց հաշվառման կարգը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ՀՀ կառավարությունը 2007 թվականի փետրվարի 1-ի N 209-Ն որոշմամբ հաստատել է երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառման կարգը, համաձայն որի՝ որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, բացառությամբ՝

ա) դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց.

բ) ամուսինների, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

գ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձանց.

դ) օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար խնամակալի (հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձանց.

ե) նախկին որդեգրողների, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով.

զ) այն անձանց, որոնք իրենց առողջական վիճակով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ:

Այն հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում անձը չի կարող երեխա որդեգրել, նրան ընդունել խնամակալության (հոգաբարձության), ընդունել ընտանիք դաստիարակության համար, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

է) այն անձանց, որոնք որդեգրման պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսապայմանները.

ը) այն անձանց, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին.

թ) որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձանց:

Որդեգրումը կատարվում է երեխա որդեգրել ցանկացող այն անձի կամ ամուսինների՝ դատարան ներկայացրած դիմումի հիման վրա,

ովքեր օրենքով սահմանված կարգին համապատասխան հաշվառված են որպես որդեգրողի թեկնածու:

Եթե երեխա որդեգրել ցանկացող անձը կամ ամուսիններն ունեն նախապես ընտրած՝ որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է երեխայի ծնողների գրավոր համաձայնությունը, ապա դրա մասին նշվում է դիմումում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ երեխա որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ որդեգրման հնարավորության մասին եզրակացությունը տալիս են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հաշվառումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների որդեգրման հնարավորության մասին եզրակացությունը տալիս է որդեգրման հարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով), որի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը (հանձնաժողովի նախագահ), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը (հանձնաժողովի քարտուղար):

Հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենտրոնացված հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Եթե երեխա որդեգրելու ցանկություն ունեն ամուսինները, ապա երկուսն էլ հաշվառվում են որպես որդեգրողի թեկնածուներ:

§5. ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող՝ ՀՀ տարածքում բնակվող ՀՀ քաղաքացիների հաշվառումը

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելու նպատակով անձամբ կամ լիազորված անձի միջոցով դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարան, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան:

Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագրի պատճենը,
2) բնակարանային պայմանների և ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
3) զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի մասին (եթե աշխատում է) տեղեկանք՝ տրված աշխատավայրից,
4) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված առնվազն երեք անձանց կամ կազմակերպության կողմից,

5) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությանը համապատասխան տրված եկամուտների վերաբերյալ հայտարարագիր կամ հարկերի և այլ պարտադիր վճարումների մասին տեղեկանք,
6) բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկով,
7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),
8) երեխայի՝ ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում և մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,
9) տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածության բացակայության մասին:

Դիմումում նշվում են որդեգրման ենթակա երեխայի մասին տվյալները՝ տարիքը, սեռը, երեխաների թիվը, ինչպես նաև անձի կամ ամուսինների համաձայնությունը կենսապայմանների ուսումնասիրության նպատակով տնային այցելություն կատարելու համար:

Եթե երեխա որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին ունի նախապես ընտրած՝ որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է ծնողների կամ միակ ծնողի գրավոր համաձայնությունը, ապա նա դրա մասին նշում է իր դիմումում:

Մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կատարում է այդ անձի կենսապայմանների ուսումնասիրություն և կազմում համապատասխան եզրակացություն:

Մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը քաղաքացուց ստացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտի հիման վրա՝ երեխա որդեգրել ցանկացող անձին տալիս է որդեգրման հնարավորության մասին եզրակացություն, որն ուժի մեջ է մեկ տարվա ընթաց-

քում, և դրական եզրակացության հիման վրա հաշվառում է որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում և լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտ (երկու օրինակից):

Հաշվառման վերցված յուրաքանչյուր որդեգրողի թեկնածուի համար ստեղծվում է հաշվառման գործ, որում պահվում են փաստաթղթերը: Հաշվառման գործերի համարները պետք է համընկնեն հաշվառման մատյանում գրանցված որդեգրողի թեկնածուների հաշվառման դիմաց նշված համարներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մարզպետարանից, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանից ստացված անձնական քարտում նշված տեղեկությունների հիման վրա որդեգրողի թեկնածուին վերցնում է կենտրոնացված հաշվառման:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը եռօրյա ժամկետում որդեգրողի թեկնածուի կենտրոնացված հաշվառման մասին տեղեկացնում է մարզպետարանին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին, որը դրա մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է որդեգրողի թեկնածուին:

Որդեգրողի թեկնածուն հաշվառումից հանվում է՝

1) իր դիմումի համաձայն.
2) դրական եզրակացության մեկ տարին լրանալու դեպքում.
3) երեխայի որդեգրման դեպքում (եթե որդեգրել է իր դիմումում նշված թվով երեխա).
4) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակություն հաստատելու դեպքում:

§ 6. ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների հաշվառումը

Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որպես որդեգրողի

թեկնածու հաշվառվելու նպատակով անձամբ կամ լիազորված անձի, կամ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության, կամ հյուպատոսական ծառայության միջոցով դիմում են հանրապետական հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, ինչպես նաև իրենց բնակության երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանի Հանրապետությունում որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելու վերաբերյալ, որդեգրողի թեկնածուի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտը և հետագայում որդեգրված երեխայի կյանքի պայմանների նկատմամբ վերահսկողության պարտավորության մասին տեղեկանքը՝ տրված իրենց երկրի իրավասու մարմնի կողմից:

Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները համապատասխան փաստաթղթերում նշված տեղեկությունները կարող են ներկայացնել տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված՝ որդեգրողի թեկնածուի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտով:

Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որդեգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը հանրապետական հանձնաժողով ներկայացնում են բնագրով՝ վավերացված հայերեն թարգմանությամբ:

Եթե երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները համապատասխան փաստաթղթերը հանրապետական հանձնաժողով ներկայացրել են լիազորված անձի միջոցով, ապա ներկայացվող փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է ներկայացվի նաև իրենց կողմից այդ անձին տրված՝ իրավասու մարմնի հաստատած լիազորագիրը:

Հանրապետական հանձնաժողովն օտարերկրյա քաղաքացիներից, քաղաքացիություն չունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո դիմում է Հայաստանի Հանրապետության արտաքին

գործերի նախարարություն փաստաթղթերի հավաստիությունը պարզելու նպատակով:

Հանրապետական հանձնաժողովը դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում օտարերկրյա քաղաքացիներից, քաղաքացիություն չունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ստացված փաստաթղթերի ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից ստացված համապատասխան տեղեկանքի հիման վրա տալիս է երեխայի որդեգրման հնարավորության մասին եզրակացություն, որն ուժի մեջ է մեկ տարվա ընթացքում:

Հանրապետական հանձնաժողովը երեխայի որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած յուրաքանչյուր որդեգրողի թեկնածուի համար ստեղծում է գործ, որում պահվում են համապատասխան փաստաթղթերի բնօրինակները և դրանց հայերեն մեկ օրինակը: Երեխայի որդեգրումից հետո փաստաթղթերը պահվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

Հանրապետական հանձնաժողովը երեխայի որդեգրման հնարավորության մասին բացասական եզրակացության մասին մեկշաբաթյա ժամկետում գրավոր տեղեկացնում է դիմողին: Դիմողը երեխայի որդեգրման հնարավորության մասին բացասական եզրակացությունը կարող է բողոքարկել դատական կարգով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանրապետական հանձնաժողովից ստացված փաստաթղթերի հիման վրա երեխա որդեգրելու համար դիմած անձին եռօրյա ժամկետում հաշվառում է որպես որդեգրողի թեկնածու:

Հաշվառման վերցված յուրաքանչյուր որդեգրողի թեկնածուի (ամուսինների) համար ստեղծվում է հաշվառման գործ, որում պահվում են փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը եռօրյա ժամկետում որդեգրողի թեկնածուի հաշվառման մասին տեղեկացնում է հանրապետական հանձնաժողովին, որը դրա մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է որդեգրողի թեկնածուին:

§7. ՀՀ-ում մշտապես բնակվող՝ երեխաներ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիների կենսապայմանների ուսումնասիրության կարգը

ՀՀ-ում մշտապես բնակվող՝ երեխաներ որդեգրել ցանկացող ՀՀ - քաղաքացիների կենսապայմանների ուսումնասիրության կարգը սահմանվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 188-Ն հրամանով, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ երեխաներ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ երեխա որդեգրել ցանկացող անձ) կենսապայմանների ուսումնասիրման հետ կապված հարաբերությունները:

Երեխա որդեգրել ցանկացող անձի կենսապայմանների ուսումնասիրությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը)՝ որդեգրել ցանկացող անձի կամ նրա կողմից լիազորված անձի դիմումի հիման վրա:

Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) երեխա որդեգրել ցանկացող անձի՝ որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելու համար դիմումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում իրականացնում է այդ անձի ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրություն և կազմում համապատասխան ակտ: Տունայց կատարելու վերաբերյալ ձեռք է բերում պայմանավորվածություն երեխա որդեգրել ցանկացող անձի հետ և կազմում ժամանակացույց:

Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետների խումբը (այսուհետ՝ մասնագետների խումբ) այցելում է երեխա որդեգրել ցանկացող անձի ընտանիք (տուն):

Մասնագետների խումբը երեխա որդեգրել ցանկացող անձի տունայցի ընթացքում ուսումնասիրում է՝

1) բնակարանային պայմանները՝ նշելով, թե ինչ իրավունքով է բնակարանը պատկանում ընտանիքին (սեփականություն, վարձակալություն, այլ), ինչպես նաև բնակարանի սենյակների թիվը,
2) կոմունալ-կենցաղային պայմանները (ջրամատակարարում, ջեռուցում),
3) սանիտարահիգիենիկ պայմանները,

4) մայրենի լեզուն,
5) հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխա որդեգրելու դեպքում՝ հատուկ խնամք, երկարատև բուժում, ապրելու և դաստիարակելու համար հատուկ պայմանները:

Հավաքագրված և գրանցված տվյալները պետք է լինեն ճշգրիտ, որի համար պահանջվում է՝

1) տարանջատել փաստերը, կարծիքները և դիտարկումները,
2) օգտագործել հստակ և ճշտված տվյալներ,
3) բոլոր գրառումներում պետք է նշված լինեն ամսաթիվը և համապատասխան մասնագետի ստորագրությունը:

Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մասնագետների խումբը կատարում է երեխա որդեգրել ցանկացող անձի կենսապայմանների գնահատում, որի արդյունքների հիման վրա կազմում է կենսապայմանների ուսումնասիրության ակտ:

Երեխա որդեգրել ցանկացող անձի ներկայացրած փաստաթղթերի և կենսապայմանների ուսումնասիրության ակտի հիման վրա մարզպետարանը երեխա որդեգրել ցանկացող անձին տալիս է երեխա որդեգրելու հնարավորության մասին եզրակացություն:

Ստորև ներկայացվում են ՀՀ տարածքում մշտապես բնակվող՝ երեխաներ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիների կենսապայմանների ուսումնասիրության ակտի, որպես որդեգրողի թեկնածու հաշվառվելու համար դիմումի և որդեգրողի թեկնածուի անձնական քարտի՝ օրենքով սահմանված ձևերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ՝ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՏ

_____

(նշել ՀՀ մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) անվանումը)

երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցներ_____

(ազգանունը, անունը, պաշտոնը)

_____

(ազգանունը, անունը, պաշտոնը)

_____

(ազգանունը, անունը, պաշտոնը)

համաձայն Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ երեխաներ որդեգրել ցանկացող անձ՝

_____

(երեխա որդեգրել ցանկացող անձի ազգանունը, անունը, հայրանունը)

բնակվող՝_____

(բնակության վայրը)

_____դիմումի,

(դիմումի ամիսը, ամսաթիվը)

ուսումնասիրել ենք _____

(երեխա որդեգրել ցանկացող անձի ազգանունը, անունը, հայրանունը)

ընտանիքի բնակարանային, կոմունալ-կենցաղային, սանիտարահիգիենիկ պայմանները:

Այդ նպատակով 200 թվականի _____ -ին կատարվել

(ամիսը, ամսաթիվը)

է տունայց, որին ներկա էր ընտանիքի անդամներից

_____

_____

(նշել առավելագույնը ներկա չափահաս անդամներից երկուսի ազգանունը, անունը, հայրանունը)

Կենսապայմանների ուսումնասիրության արդյունքները՝

1) ընտանիքի բնակարանային պայմանները՝

_____

(բնակարանի տիրապետման իրավունքը՝ սեփականություն, վարձակալություն, այլ)

2) կոմունալ-կենցաղային պայմանները՝ _____

(ջրամատակարարում, ջեռուցում)

3) սանիտարահիգիենիկ պայմանները՝ _____

Ուսումնասիրության արդյունքում որդեգրել ցանկացող անձի կենսապայմանները գնահատվում են _____,

(բավարար/անբավարար)

համաձայն որի անձի կենսապայմանները _____

(համապատասխանում են/չեն համապատասխանում)

ընտանիքում երեխային դաստիարակության հանձնելու համար պահանջներին:

Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակից՝

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(ստորագրությունը)

_____
(ամիսը, ամսաթիվը)

ԴԻՄՈՒՄ
ՈՐՊԵՍ ՈՐԴԵԳՐՈՂԻ ԹԵԿՆԱՑՈՒ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ազգանուն _____

Անուն _____

Հայրանուն _____

Բնակվում եմ _____

Ցանկանում եմ որդեգրել _____

(նշել որդեգրման ենթակա երեխայի մասին տվյալները՝ տարիքը, սեռը, ցանկության դեպքում՝ այլ բնորոշիչ հատկանիշներ, երեխաների թիվը)

_____ երեխա:

Համաձայն եմ, որպեսզի իմ ընտանիքում իրականացվի կենսապայմանների ուսումնասիրություն:

Երեխան ամուսիններից մեկի կողմից որդեգրվելու դեպքում որդեգրման համար պահանջվում է մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը, եթե երեխան չի որդեգրվում երկու ամուսինների կողմից: Երեխայի որդեգրման համար մյուս ամուսնու համաձայնությունը չի պահանջվում, եթե ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարուց ավելի համատեղ չեն ապրում և մյուս ամուսնու բնակության վայրը անհայտ է:

_____
(դիմումը լրացնող անձի անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

_____
(ամիսը, ամսաթիվը)

ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՐՏ N
ՈՐԴԵԳՐՈՂԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ

_____
Որդեգրողի թեկնածուի անձնական քարտը լրացնող մարմնի անվանումը (լրացնել՝
ՀՀ մարզպետարան (Երևանի քաղաքապետարան)

Լրացնելու օրը, ամիսը, տարին _____

1. Տվյալներ երեխա որդեգրել ցանկացող անձի մասին _____

_____
(անունը, ազգանունը, հայրանունը)

1) սեռը _____
2) ծննդյան օրը, ամիսը, տարին _____
3) ազգությունը _____
4) քաղաքացիությունը _____
5) ծննդյան վայրը _____
6) անձնագրի տվյալները _____ N _____
սերիան համարը, երբ և ում կողմից է տրվել
7) բնակության վայրը _____
8) աշխատանքի վայրը և զբաղեցրած պաշտոնը
_____
9) ընտանեկան դրությունը _____
(ամուսնացած է, ամուրի է, այլ)
10) տվյալներ առողջական վիճակի մասին
_____

2. Որդեգրման ենթակա երեխայի մասին տվյալներ
_____
(սեռը, տարիքը, հաշմանդամ է, հիվանդ է, այլ առանձնահատուկ հատկանիշներ, թիվը)

3. Լրացուցիչ տեղեկություններ _____

Անձնական քարտը լրացնող աշխատակից

_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

_____
(ամիսը, ամսաթիվը)

Բաժին 4
Խնամակալությունն ու հոգաբարձությունը երեխաների նկատմամբ

§ 1. Խնամակալության և հոգաբարձության հասկացությունը

Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար: Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում է նաև նրանց դաստիարակելու նպատակով:

Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

Խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ: Խամակալություն և հոգաբարձություն նշանակվում է նաև այն անչափահասների նկատմամբ, ովքեր թեև ծնողներ ունեն, բայց նրանք տարբեր հարգելի պատճառներով ի վիճակի չեն հոգ տանել իրենց երեխաների նկատմամբ: Նման հարգելի պատճառներ են ծնողների երկարատև բացակայությունը, նրանց ծանր հիվանդությունը (երբ, օրինակ, հոգեկան հիվանդ ծնողն ինքն է գտնվում խնամակալության տակ կամ գտնվում է բուժական հաստատությունում): Երեխաների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն է նշանակվում նաև այն դեպքում, երբ ծնողները զրկված են ծնողական իրավունքներից: Եվ քանի որ երեխաների նկատմամբ հսկողությունը պետք է լինի մշտական և մեկը պետք է պատասխանատու համարվի նրանց դաստիարակության համար, ուստի նման դեպքում հարկ է լինում դիմել խնամակալության և հոգաբարձության ինստիտուտին:

Խնամակալություն և հոգաբարձություն է նշանակվում նաև այն չափահաս անձանց անձնական ու գույքային իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար, ովքեր իրենց առողջական վիճակով չեն

կարող ինքնուրույն իրագործել իրենց իրավունքները և կատարել իրենց պարտականությունները:

Հոգաբարձությունը սահմանվում է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ:

Խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի նկատմամբ, մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Խնամակալներ և հոգաբարձուներ նշանակվում են չափահաս գործունակ քաղաքացիները: Խնամակալներ և հոգաբարձուներ չեն կարող նշանակվել ծնողական իրավունքներից զրկված քաղաքացիները: Խնամակալը կամ հոգաբարձուն նշանակվում է իր համաձայնությամբ: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն նրա բարոյական և անձնական մյուս հատկանիշները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններ կատարելու ունակությունը, նրա ու խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը:

§ 2. Խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները

Անչափահաս անձանց նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակը նրանց համար օրինական ներկայացուցիչ ապահովելն է: Խնամակալը (հոգաբարձուն) պետության կողմից լիազորված է լինելու նրա դաստիարակը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Խնամակալը (հոգաբարձուն) իրավունք ունի դաստիարակելու և պարտավոր է դաստիարակել իր անչափահաս խնամարկյալին: Անչա-

փահասների նկատմամբ նշանակված խնամակալներն ու հոգաբարձուները պարտավոր են իրենց խնամարկյալներին դաստիարակել, հոգ տանել նրանց ֆիզիկական զարգացման, ուսուցման և հանրօգուտ գործունեության համար նախապատրաստելու մասին, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը: Խնամակալը (հոգաբարձուն) պարտավոր է անձամբ դաստիարակել խնամարկյալին, և ինչպես ծնողը՝ իրավունք չունի այդ պարտականությունը դնել ուրիշի վրա:

Իրենց պարտականությունները պատշաճորեն կատարելու համար խնամակալներն ու հոգաբարձուները պարտավոր են համատեղ ապրել իրենց խնամարկյալի հետ: Խնամակալը (հոգաբարձուն) կարող է խնամարկյալին բերել իր մոտ ապրելու կամ ինքը կարող է տեղափոխվել խնամարկյալի բնակելի տարածությունը: Առաջին դեպքում նա պետք է խնամարկյալի համար այնպիսի պայմաններ ստեղծի, ինչպիսին ստեղծել է իր ընտանիքի անդամների համար: Տասնվեց տարին լրացած խնամարկյալից հոգաբարձուի առանձին ապրելը թույլատրում է խնամակալության ու հոգաբարձության մարմինը, եթե դա անբարենպաստ չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների ու շահերի պաշտպանության վրա:

Առանձին դեպքերում խնամակալության և հոգաբարձության մարմինները կարող են թույլ տալ հոգաբարձուին տասնվեց տարեկան դարձած խնամարկյալից առանձին ապրելու, եթե հիշյալ մարմինները կհանգեն այն եզրակացությանը, որ առանձին ապրելն անբարենպաստ չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության և նրա իրավունքների ու շահերի պաշտպանության վրա:

Խնամակալները (հոգաբարձուները) իրավունք ունեն պահանջելու երեխային վերադարձնել ցանկացած անձից, այդ թվում՝ ծնողներից, եթե նրանք երեխային պահում են առանց օրինական հիմքի: Բացառիկ դեպքերում միայն կարելի է մերժել խնամակալի պահանջը, եթե կապացուցվի, որ երեխային իրեն վերադարձնելը հակասում է երեխայի շահերին:

Խնամակալը (հոգաբարձուն) կարող է երեխային տեղավորել նախադպրոցական հաստատությունում՝ մանկամսուրում, մանկապարտեզում՝ խնամակալական մարմինների գիտությամբ: Սակայն նա իրավունք չունի խնամարկյալին հանձնել այլ անձի: Որպես երեխայի օրինական ներկայացուցիչ նա կարող է դատարանով երեխային հետ

պահանջել բոլոր նրանցից, ովքեր կպահեն նրան առանց օրինական հիմքի:

Խնամակալները (հոգաբարձուները) պարտավոր են հոգ տանել խնամարկյալի կյանքի ու առողջության պահպանման, նրա խնամքի համար: Իրականում նրանցից շատերը, հատկապես երբ հարազատներ են լինում, իրենց միջոցներով են պահում խնամարկյալ երեխաներին: Սակայն նրանք պարտավոր չեն նրանց ապրուստը հոգալ իրենց միջոցներով:

Խնամակալի և հոգաբարձուի իրավունքը՝ ինքնուրույնաբար որոշել երեխայի դաստիարակության ձևերն ու եղանակները, սահմանափակված են այդ գործում խնամակալության ու հոգաբարձության մարմինների հանձնարարականներին հետևելու պարտականությունով: Դաստիարակության ձևերն ու մեթոդներն ընտրելիս խնամակալներն ու հոգաբարձուները պարտավոր են հաշվի առնել երեխաների կարծիքը:

Խնամակալության և հոգաբարձության տակ գտնվող երեխաները պահպանում են իրենց ծնողների և ազգականների հետ հաղորդակցվելու իրավունքը, բացի այն դեպքերից, երբ ծնողները զրկված են ծնողական իրավունքներից կամ սահմանափակված են նրանց ծնողական իրավունքները: Ուստի խնամակալներն ու հոգաբարձուները պարտավոր են պայմաններ ստեղծել խնամարկյալ երեխաների այդ իրավունքը կենսագործելու համար, միաժամանակ իրավունք ունեն չթույլատրել նրանց շփվելու երեխաների հետ, եթե նման շփումը կհակասի երեխայի շահերին:

Խնամակալը (հոգաբարձուն) իր խնամարկյալի օրինական ներկայացուցիչն է: Հետևաբար, պետք է ճշտորեն ներկայացնի նրա շահերը: Խնամակալը (հոգաբարձուն) պարտավոր է կառավարել խնամարկյալ երեխայի գույքը: Այդ նպատակով նա կարող է խնամարկյալի անունից կնքել նրա շահերին համապատասխանող ցանկացած գործարք՝ առանց խնամակալության ու հոգաբարձության մարմնի թույլտվության: Բացի դրանից, բազմաթիվ գործարքներ կնքելու համար պահանջվում է ունենալ խնամակալության և հոգաբարձության մարմինների թույլտվությունը (նոտարական հաստատման ենթակա գործարքներ, խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելու, գույքի բաժանում կատարելու, բնակելի տներ փոխանակելու, խնամարկյալի գույքն օտարելու գործարքներ):

Խնամակալը (հոգաբարձուն) իրավունք չունի որևէ գործարք կնքել խնամարկյալի հետ: Խնամարկյալի հետ գործարքներ կնքել չեն կարող նաև խնամակալի (հոգաբարձուի) ամուսինը, նրանց մերձավոր այլ ազգականներ: Բոլոր դեպքերում, խնամարկյալի անունից կնքվող, սակայն կենցաղային շրջանակներից դուրս եկող գործարքները պետք է կնքվեն խնամակալական մարմինների նախնական համաձայնությամբ: Իսկ դա հնարավորություն է ստեղծում հսկողություն իրականացնել խնամակալի (հոգաբարձուի) գործողությունների նկատմամբ՝ խնամարկյալի գույքային իրավունքների պաշտպանության ոլորտում:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար պատասխանատու են ընդհանուր հիմունքներով, իսկ եթե նրանք չունեն բավարար եկամուտներ կամ այլ գույք կամ վաստակ, որը կբավականացնի վնասի հատուցման համար, ապա վնասի համապատասխան մասը պետք է հատուցի հոգաբարձուն, եթե չապացուցի, որ վնասը պատճառվել է ոչ իր մեղքով:

Խնամակալը և հոգաբարձուն կարող են կրել նաև քրեական պատասխանատվություն իրենց պարտականությունները չկատարելու և իրենց իրավունքները չարաշահելու համար: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 172-րդ հոդվածի համաձայն հանցագործություն է համարվում խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական կամ այլ անձնական դրդումներով օգտագործելը, կամ խնամարկյալին դիտավորությամբ առանց հսկողության կամ անհրաժեշտ օգնության թողնելը, որն առաջացրել է խնամարկյալի իրավունքների ու օրինական շահերի էական սահմանափակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Խնամակալի և հոգաբարձուի գործունեությունը գտնվում է խնամակալական մարմինների հսկողության ներքո: Ցանկացած անձ, այդ թվում՝ նաև խնամարկյալն ինքը, կարող է խնամակալի (հոգաբարձուի) գործողությունները գանգատարկել խնամակալական մարմիններին: Խնամակալների ու հոգաբարձուների գործունեությունը գտնվում է նաև հանրության հսկողության ներքո:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները պարտավոր են պարբերաբար հետևել խնամակալության տրված երեխաների դաստիարակությանն ու կենսապայմաններին: Այդ կարող է արվել խնամարկյաների տունայցի, տարեկան մի քանի անգամ ստուգումներ անցկացնելու միջոցով: Երեխաների դաստիարակության ու խնամքի գործում թերություններ նկատվելու դեպքում պետք է օգնություն ցույց տրվի խնամակալին (հոգաբարձուին): Իսկ եթե բացահայտվեն նրանց կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման փաստեր, ապա կարող է դրվել խնամակալին (հոգաբարձուին) իր պարտականություններից ազատելու հարցը: Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխաների նկատմամբ խնամակալության ու հոգաբարձության պարտականությունները կատարվում են անհատույց: Սակայն խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունների բարեխիղճ կատարումը չպետք է դուրս մնա խնամակալական մարմինների և հանրության ուշադրությունից: Կարելի է և պետք է հնարավոր եղանակներով խրախուսել իր պարտականությունները բարեխղճորեն կատարող և իրավունքները ճիշտ իրականացնող խնամակալին (հոգաբարձուին):

Խնամակալը և հոգաբարձուն պարտավոր են իրենց գործունեության մասին հաշվետվություն տալ խնամակալական մարմիններին: Եթե խնամակալական մարմիններն անհրաժեշտ համարեն՝ կարող են խնամարկյալի նկատմամբ նոր խնամակալ (հոգաբարձու) նշանակել:

§3. Խնամակալության և հոգաբարձության դադարումը

Խնամակալությունը և հոգաբարձությունը դադարում են որոշակի իրավաբանական փաստերի առկայության դեպքում: Ըստ որում, խնամակալության (հոգաբարձության) դադարման համար մի դեպքում պահանջվում է խնամակալական մարմնի հատուկ որոշումը, մեկ այլ դեպքում՝ ոչ, քանի որ դրա դադարման համար վրա հասած իրավաբանական փաստի առկայությունը բավական է:

Նորմալ պայմաններում փոքրահասակ խնամարկյալի նկատմամբ խնամակալությունը դադարում է, երբ նա դառնում է տասնչորս

տարեկան: Սակայն խնամակալի պարտականություններն իրականացնող անձը, առանց հատուկ որոշման, դառնում է անչափահասի հոգաբարձուն: Դրա հետևանքով խնամակալական իրավահարաբերությունները վեր են ածվում հոգաբարձուական իրավահարաբերությունների:

Անչափահաս խնամարկյալի տասնութ տարին լրանալու դեպքում նրա նկատմամբ նշանակված հոգաբարձությունը դադարում է առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի հատուկ որոշման: Դա բացատրվում է նրանով, որ երբ խնամարկյալը տասնութ տարեկան է դառնում՝ դադարում է դաստիարակության իրավունքը և ընդհանրապես դաստիարակության իրավահարաբերությունը:

Խնամակալությունը և հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարում են նաև խնամարկյալի կամ խնամակալի (հոգաբարձուի) մահվան դեպքում:

Խնամակալությունը և հոգաբարձությունը կարող են դադարել վաղակետ, նախքան երեխայի տասնչորս կամ տասնութ տարեկան դառնալը, եթե դրա համար բավարար հիմքեր են լինում:

Խնամակալությունը (հոգաբարձությունը) դադարում է այն դեպքում, երբ երեխան վերադարձվում է ծնողներին, տրվում է որդեգրման կամ տեղավորվում է մանկական հաստատությունում: Ենթադրվում է, որ նշված բոլոր դեպքերում պետք է լինի խնամակալի (հոգաբարձուի) համաձայնությունը:

Խնամակալությունը (հոգաբարձությունը) կարող է դադարել նաև խնամակալի կամ հոգաբարձուի անձնական ցանկության դեպքում, եթե հարգելի պատճառներ կան (նրա հիվանդ լինելը, նյութական պայմանների փոփոխելը, բնակության համար այլ բնակավայր փոխադրվելը, խնամարկյալի հետ անհրաժեշտ համերաշխության բացակայությունը և այլն): Ավելացնենք, որ առանց հիմնավոր պատճառաբանության ՀՀ ընտանեկան օրենսգրքում չկան խնամակալության և հոգաբարձության դադարման մասին նորմեր:

Հոգաբարձությունը դադարում է նաև այն անչափահասի նկատմամբ, որն օրենքով թույլատրվող դեպքում ամուսնանում է նախքան չափահաս դառնալը, ինչպես նաև անչափահասի էմանսիպացիայի դեպքում: Նման դեպքերում չի պահանջվում խնամակալական մարմնի որոշումը:

Խնամակալությունը և հոգաբարձությունը դադարում են նաև այն դեպքում, երբ խնամակալը կամ հոգաբարձուն պատշաճորեն չեն կատարում իրենց վրա դրված պարտականությունները: Նման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալին կամ հոգաբարձուին հեռացնում է իր պարտականությունների կատարումից: Եթե խնամակալը (հոգաբարձուն) խնամակալությունը (հոգաբարձությունն) օգտագործում է շահադիտական նպատակներով՝ ի վնաս խնամարկյալի, մասնավորապես՝ զբաղեցնում է նրա բնակելի տարածությունը, օգտագործում նրա գույքը և այլն, ինչպես նաև առանց հսկողության և առանց անհրաժեշտ նյութական օգնության է թողնում խնամարկյալ երեխաներին, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինները ոչ միայն պետք է խնամակալությունը (հոգաբարձությունը) դադարեցնելու որոշում կայացնեն, այլև պարտավոր են դատախազին հանձնել անհրաժեշտ նյութեր, մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

Խնամակալության և հոգաբարձության դադարման դեպքում խնամակալը (հոգաբարձուն) պարտավոր է հատուցել այն նյութական վնասը, որն ինքը պատճառել է խնամարկյալին:

Չի բացառվում, որ խնամակալը (հոգաբարձուն) ի վիճակի չլինի կատարելու իր պարտականություններն իրենից անկախ պատճառներով (ծերության, հիվանդության և այլն): Խնամակալության կամ հոգաբարձության մարմինը կարող է նրան ազատել այդ պարտականությունների կատարումից: Ըստ որում, իր պարտականություններից խնամակալին (հոգաբարձուին) ազատելու հիմքերը սպառիչ չեն: Բոլոր դեպքերում հարցը պետք է լուծվի ելնելով խնամարկյալ երեխայի շահերից:

Սակայն խնամակալը (հոգաբարձուն) կարող է իր պարտականություններից ազատվել նաև դրանք ոչ պատշաճ կատարելու հետևանքով: Երբ նրանք հեռացվում են իրենց պարտականությունների կատարումից՝ դա արդեն դիտվում է որպես պատժամիջոց (սանկցիա) մեղավոր վարքագծի համար: Ուրեմն խնամակալը (հոգաբարձուն) հեռացվում է իր պարտականությունից, եթե նա մեղավոր է իր պարտականությունները ոչ պատշաճորեն կատարելու հարցում, մասնավորապես՝ խուսափել է երեխային դաստիարակելու իր պարտականությունը կատարելուց կամ չարաշահել է իր իրավունքները:

Բաժին 5.
Երեխաների քաղաքացիության որոշման կարգը

§1. Երեխայի քաղաքացիությունը ծնվելու ժամանակ

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը հատուկ գլուխ է նվիրել երեխաների քաղաքացիության կարգավորմանը՝ նրանց ծնողների կողմից ՀՀ քաղաքացիության փոփոխման կամ որդեգրման դեպքում:

Համաձայն նշված օրենքի դրույթների՝ երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքա-

ցիություն, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև տասնչորս տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

Եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, նրանց մինչև տասնչորս տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

§2. Երեխայի քաղաքացիությունը որդեգրման ժամանակ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկն օտարերկրյա քաղաքացի է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե՝

1) առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը.
2) երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրած ամուսնու համաձայնությունը.

3) երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխան, ում նկատմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից:

Նման դեպքում երեխան կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից ծնողների դիմումով, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից:

Ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ երեխաների համաձայնության առկայության դեպքում:

Բաժին 6
ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

§1. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

Երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք են հանդիսանում նաև այն միջազգային պայմանագրերը, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը:

Ամբողջ աշխարհի երեխաների վիճակի անընդհատ բարելավումը, երեխաների զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև երեխայի իրավունքների առանձնահատուկ պաշտպանությունը հնարավոր է իրականացնել միայն խաղաղության և անվտանգության պայմաններում: Ներկայումս ոչ համապատասխան սոցիալական պայմանների, տարերային աղետների, զինված ընդհարումների, շահագործման, անգրագիտության, սովի և հիվանդությունների հետևանքով երեխաների վիճակն աշխարհի շատ շրջաններում մնում է խիստ ծանր:

Երեխաների կյանքի պայմանների բարելավումը պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցների ձեռնարկման անհրաժեշտություն, որը պետք է իրականացվի ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Աշխարհի երեխաների բարեկեցության բարձրացման և դաստիարակության գործում կարևոր է Միավորված ազգերի կազմակերպության և Միավորված ազգերի Կազմակերպության Մանկական հիմնադրամի դերը:

Համաձայն 1959թ. ընդունված Երեխայի իրավունքների հռչակագրի՝ «Երեխան, նկատի առնելով նրա ֆիզիկական և մտավոր անհասությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հոգատարության, ներառյալ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»:

Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հայտարարել է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օգնության իրավունք:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան 1989թ. նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով ընդունեց Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), որը բաց է ստորագրման, վավերացման և միանալու համար:

Հարկ ենք համարում նշել, որ 1989թ. լրացել էր Երեխայի իրավունքների հռչակագրի երեսուներորդ տարեդարձը (Երեխայի իրավունքների հռչակագիրն ընդունվել է 1959թ. նոյեմբերի 20-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից):

Կոնվենցիայի մասնակից պետությունները համոզված լինելով, որ ընտանիքին, որպես հասարակության հիմնական բջջի, և նրա բոլոր անդամներին, հատկապես երեխաներին, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որ երեխաները լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանան ընտանեկան շրջապատում՝ երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում, որ երեխան հասարակության մեջ ինքնուրույն կյանքի պետք է նախապատրաստվի և դաստիարակվի խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության և համերաշխության գաղափարների ոգով, միացան նշված Կոնվենցիային:

Կոնվենցիայի նպատակների համար երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ:

Մասնակից պետությունները հարգում և ապահովում են Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից:

Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դա-

տարանների, վարչական կամ օրենսդիր մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի անկապտելի իրավունք:

Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը:

Երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

Մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում երեխաների ապօրինի տեղափոխումների և արտասահմանից չվերադառնալու դեմ պայքարելու համար:

Այդ նպատակով մասնակից պետությունները նպաստում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքմանը կամ գործող համաձայնագրերին միանալուն:

Մասնակից պետությունները հարգում են երեխայի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Մասնակից պետությունները հարգում են ծնողների և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների իրավունքն ու պարտականությունները՝ երեխայի զարգացող ընդունակություններին համապատասխան, ուղղություն տալու երեխային իր իրավունքներն իրականացնելիս:

Իր կրոնը կամ հավատը դավանելու ազատությունը կարող է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության բարոյականության և առողջության կամ այլ անձանց հիմնարար իրավունքների կամ ազատությունների պաշտպանության համար:

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

Մասնակից պետություններն ընդունում են, որ մտավոր կամ ֆիզիկական խեղումներով երեխան պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով՝ այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին:

Մասնակից պետությունները ճանաչում են խեղումներով երեխայի՝ հատուկ խնամքի իրավունքը, խրախուսում և, ռեսուրսների առկայության դեպքում, դրա իրավունքն ունեցող երեխային և նրա խնամքի համար պատասխանատու անձանց ցույց են տալիս օգնություն, եթե այդ առթիվ խնդրանք է ներկայացվել և եթե դա համապատասխանում է երեխայի վիճակին, ծնողների կամ նրա նկատմամբ խնամք տանող այլ անձանց դրությանը:

Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ առողջապահության առավել կատարյալ ստանդարտներից և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման ծառայություններից օգտվելու իրավունքը: Մասնակից պետությունները ձգտում են ապահովել, որպեսզի ոչ մի երեխա չզրկվի առողջապահական համակարգի նման ծառայություններից օգտվելու իր իրավունքից:

Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքը:

Մասնակից պետությունները ճանաչում են մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և ուրիշների հիմնարար ազատությունների նկատ-

մամբ, և որի դեպքում հաշվի է առնվում երեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերաինտեգրման և հետագա դրական դեր խաղալուն նպաստելու ցանկալիությունը:

Ցանկացած մասնակից պետություն կարող է չեղյալ հայտարարել Կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ մասին ծանուցագիր ստանալուց հետո մեկ տարի անց:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:

§2. Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

Կոնվենցիան ստորագրող Պետությունները, հստակ համոզված լինելով, որ երեխայի շահերն ամենակարևորն են նրանց մասին հոգալու հարցերում, ցանկանալով միջազգային մակարդակով պաշտպանել երեխաներին նրանց անօրինականորեն տեղափոխելու կամ պահելու վնասակար հետևանքներից և ընթացակարգեր ստեղծել նրանց մշտական բնակության Պետություն նրանց անհապաղ վերադարձը, ինչպես նաև տեսակցության իրավունքի պաշտպանությունն ապահովելու համար, որոշեցին այդ նպատակով կնքել Կոնվենցիա և համաձայնեցին, որ Կոնվենցիայի նպատակներն են.

ա) ապահովել որևէ Պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և

բ) երաշխավորել մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումն այլ Պայմանավորվող պետություններում:

Համաձայն կոնվենցիայի՝ երեխայի տեղափոխումը կամ պահելն անօրինական է դիտվում, եթե.

ա) դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի,

հաստատության կամ այլ մարմնի՝ այն Պետության օրենսդրությանը համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և

բ) տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը:

«ա» կետում նշված խնամակալության իրավունքները կարող են առաջանալ, մասնավորապես, օրենքի ուժով կամ դատական կամ վարչական որոշման կամ տվյալ Պետության օրենսդրությանը համապատասխան իրավական ուժ ունեցող համաձայնության արդյունքում:

Կոնվենցիան կիրառվում է ցանկացած երեխայի նկատմամբ, որը խնամակալության կամ տեսակցության իրավունքների խախտումից անմիջապես առաջ մշտապես բնակվել է որևէ Պայմանավորվող պետությունում: Կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան:

Կենտրոնական մարմինները համագործակցում են միմյանց հետ և օժանդակում են իրենց Պետությունների իրավասու մարմինների միջև համագործակցությանը՝ երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու և Կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար:

Մասնավորապես, անմիջականորեն կամ որևէ միջնորդի միջոցով նրանք ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի՝

ա) բացահայտեն, թե որտեղ է գտնվում անօրինականորեն տեղափոխված կամ պահվող երեխան.

բ) կանխարգելեն երեխային հետագա վնաս պատճառելը կամ շահագրգիռ անձանց վնասելը՝ ժամանակավոր միջոցներ ձեռնարկելով կամ կարգադրելով ձեռնարկել.

գ) ապահովեն երեխայի կամավոր վերադարձը կամ նախաձեռնեն խնդիրների բարեկամական լուծումը.

դ) անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն փոխանակեն երեխայի սոցիալական ծագման մասին.

ե) տրամադրեն ընդհանուր բնույթի տեղեկատվություն Կոնվենցիայի կիրառմանն առնչվող՝ իրենց Պետությունների իրավունքի մասին.

զ) նախաձեռնեն դատական կամ վարչական ընթացակարգեր կամ նպաստեն այդպիսի ընթացակարգերին՝ երեխայի վերադարձմանը հասնելու նպատակով և, անհրաժեշտության դեպքում, համաձայնության գան տեսակցության իրավունքի արդյունավետ իրականացումը կազմակերպելու և ապահովելու համար.
է) եթե հանգամանքները պահանջում են, ապահովեն կամ դյուրացնեն իրավաբանական օգնության և խորհրդատվության տրամադրումը, ներառյալ փաստաբանների և իրավաբանական խորհրդատուների մասնակցությունը.
ը) ապահովեն այնպիսի կազմակերպչական օգնություն, որը կարող է անհրաժեշտ և տեղին լինել երեխայի անվտանգ վերադարձն ապահովելու համար.
թ) տեղյակ պահեն միմյանց սույն Կոնվենցիայի կատարման մասին և հնարավորին չափով վերացնեն դրա կիրառման խոչընդոտները:

Այն Պետության Կենտրոնական մարմինը, որտեղ գտնվում է երեխան, երեխային կամավոր վերադարձնելու համար ձեռնարկում է բոլոր համապատասխան միջոցները կամ կարգադրում է դրանք ձեռնարկել:

Կոնվենցիան ընդունվել է Հաագայում, 1980 թվականի հոկտեմբերի 25-ին:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից:

§3. Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

Կոնվենցիան ստորագրող Պետությունները, ընդունելով, որ երեխան իր անձի լիարժեք և ներդաշնակ զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան շրջապատում՝ երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում, հիշեցնելով, որ յուրաքանչյուր Պետություն, որպես առաջնահերթ խնդիր, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի երեխայի խնամքն իրականացնի նրա հարազատ ընտանիքը, ընդունելով, որ օտարերկրյա որդեգրումը կարող է առավելութ-

յուններ տրամադրել երեխային, որի համար հնարավոր չէ գտնել հարմար ընտանիք նրա ծագման Պետությունում, համոզված լինելով այնպիսի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մեջ, որ օտարերկրյա որդեգրումը պետք է կատարվի այնպես, որ հաշվի առնվեն երեխայի լավագույն շահերը՝ նրա հիմնական իրավունքները հարգելով և երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը կանխելու համար, ցանկանալով ընդունել ընդհանուր դրույթներ այդ նպատակի համար, հաշվի առնելով միջազգային փաստաթղթերում ամրագրված սկզբունքները, համաձայնեցին.

ա) ստեղծել երաշխիքներ, որ օտարերկրյա որդեգրումն իրականացվի երեխայի լավագույն շահերից ելնելով և միջազգային իրավունքով ճանաչված նրա հիմնական իրավունքների պահպանումով.

բ) Պայմանավորվող պետությունների միջև ստեղծել համագործակցության համակարգ՝ այդպիսի երաշխիքների հարգանքն ապահովելու համար և դրա միջոցով կանխելով երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը.

գ) ապահովել Կոնվենցիայի համաձայն իրականացված որդեգրման ճանաչումը Պայմանավորվող պետություններում:

Կոնվենցիան կիրառվում է, երբ մի Պայմանավորվող պետությունում (ծագման Պետություն) մշտապես բնակվող երեխան տեղափոխվել, տեղափոխվում կամ պետք է տեղափոխվի այլ Պայմանավորվող պետություն (ընդունող Պետություն)՝ կամ ծագման Պետությունում ամուսինների կամ ընդունող պետությունում սովորաբար բնակվող անձի կողմից նրա որդեգրումից հետո, կամ ընդունող Պետությունում կամ ծագման Պետությունում նման որդեգրման նպատակներով:

Կոնվենցիան տարածվում է միայն այն որդեգրումների վրա, որոնք մշտական կապ են ստեղծում ծնողների և երեխաների միջև:

Կոնվենցիայի շրջանակներում որդեգրումը կատարվում է միայն այն դեպքում, եթե ծագման Պետության իրավասու մարմինները.

ա) հաստատել են, որ երեխան կարող է որդեգրվել.

բ) ծագման Պետությունում երեխայի տեղավորման հնարավորությունների պատշաճ քննարկումից հետո որոշել են, որ օտարերկրյա որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից.

գ) համոզվել են, որ՝

1) անձինք, հիմնարկներն ու մարմինները, որոնց համաձայնությունն անհրաժեշտ է որդեգրման համար, պատշաճ կերպով

խորհրդատվություն են ստացել և տեղեկացված են եղել իրենց համաձայնության հետևանքների մասին, մասնավորապես՝ այն բանի առնչությամբ, թե արդյոք որդեգրումը կհանգեցնի երեխայի և նրա հարազատ ընտանիքի միջև իրավական կապի դադարեցման, թե՝ ոչ.

2) նման անձինք, հիմնարկները և մարմինները կամավոր տվել են իրենց համաձայնությունը պահանջվող իրավական ձևով, որն արտահայտված կամ հաստատված է գրավոր.

3) համաձայնությունը չի տրվել և հետ չի վերցվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց.

4) որտեղ պահանջվում է, մոր համաձայնությունը տրվել է միայն երեխայի ծնվելուց հետո, և

դ) երեխայի տարիքը և հասունացման աստիճանը հաշվի առնելով՝ համոզվել են, որ՝

1) երեխայի հետ խորհրդակցել են և նրան պատշաճ կերպով տեղեկացրել են որդեգրման հետևանքների և որդեգրմանը նրա համաձայնության անհրաժեշտության մասին, եթե նման համաձայնություն պահանջվում է.

2) հաշվի են առնվել երեխայի ցանկությունը և կարծիքը.

3) որդեգրման վերաբերյալ երեխայի համաձայնությունը, եթե նման համաձայնությունը պահանջվում է, ստացվել է կամքի ազատ արտահայտմամբ՝ պատշաճ իրավական ձևով, որն արտահայտված կամ հաստատված է գրավոր, և

4) նման համաձայնությունը չի տրվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց:

Կոնվենցիայի շրջանակներում որդեգրումը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե ընդունող Պետության իրավասու մարմինները.

ա) որոշել են, որ որդեգրող ապագա ծնողները որդեգրման իրավունք ունեն և կարող են դիմել նման քայլի.

բ) համոզվել են, որ որդեգրող ապագա ծնողներն անհրաժեշտ չափով խորհրդատվություն են ստացել, և

գ) որոշել են, որ երեխային թույլատրվում է կամ թույլատրվելու է մուտք գործել այդ Պետություն և մշտապես բնակվել այնտեղ:

Կենտրոնական մարմիններն անմիջականորեն կամ պետական մարմինների կամ իրենց Պետությունում հավատարմագրված այլ

մարմինների միջոցով ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, մասնավորապես, այն բանի համար, որ՝

ա) տեղեկատվություն հավաքեն, պահպանեն և փոխանակեն երեխայի վիճակի և որդեգրող ապագա ծնողների մասին՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է որդեգրումը ձևակերպելու համար.

բ) հեշտացնեն, պահպանեն և արագացնեն որդեգրման ընթացակարգը.

գ) աջակցեն իրենց Պետություններում որդեգրման հարցերով խորհրդատվության և որդեգրման իրականացումից հետո ծառայությունների զարգացմանը.

դ) միմյանց տրամադրեն օտարերկրյա որդեգրման փորձի վերաբերյալ ընդհանուր գնահատող զեկույցները.

ե) պատասխանեն, որքանով դա թույլատրված է իրենց Պետության օրենքով, այլ Կենտրոնական կամ պետական մարմինների կողմից որդեգրման բնագավառում որոշակի իրավիճակի մասին տեղեկատվություն տրամադրելու հիմնավորված խնդրանքներին:

Ոչ ոք չպետք է ստանա չարդարացված ֆինանսական կամ այլ օգուտ օտարերկրյա որդեգրմանը վերաբերող գործունեությունից:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները որդեգրման գործընթացում պետք է գործեն արագ:

Կոնվենցիային մասնակից ցանկացած Պետություն կարող է այն չեղյալ հայտարարել ավանդապահին հասցեագրված գրավոր ծանուցման միջոցով:

Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ծանուցումն ավանդապահի ստանալուց հետո՝ տասներկու ամիսը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը: Երբ ծանուցման մեջ նշվում է չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ, ապա չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումն ավանդապահի ստանալուց հետո՝ այդ ավելի երկար ժամկետը լրանալուց հետո:

Կոնվենցիան ընդունվել է Հաագայում 1993 թ. մայիսի 29-ին, մեկ բնօրինակով:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից:

§4. Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիան որպես երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիք

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը, գումարված Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհրդի կողմից, անհրաժեշտ համարելով ընդունել նոր ակտեր երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացման համար՝ որպես ազգային և միջազգային գործունեության գլխավոր առաջնահերթություն, ներառյալ միջազգային համագործակցությունը և օգնությունը՝ երեխայի աշխատանքի հիմնարար ակտեր հանդիսացող Աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիքի մասին 1973 թվականի կոնվենցիան և հանձնարարականը լրացնելու նպատակով, նկատի ունենալով, որ երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արդյունավետ վերացումը պահանջում է անհապաղ և համակողմանի գործողություններ, հաշվի առնելով անվճար բազային կրթության կարևորությունը և երեխաներին այդ կարգի աշխատանքից ազատման անհրաժեշտությունը, ինչպես նաև նրանց վերականգնումը և սոցիալական ինտեգրումը, հաշվի առնելով այդ դեպքում նրանց ընտանիքների կարիքները, ընդունելով, որ երեխայի աշխատանքը մեծամասամբ աղքատության հետևանք է, 1999 թվականի հունիսի տասնյոթին ընդունել է Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա):

Կոնվենցիայի նպատակների համար «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը» եզրույթն ընդգրկում է՝

ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար,

բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար,

գ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակաիրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես

թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,

դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Յուրաքանչյուր անդամ պետություն, հաշվի առնելով կրթության կարևորությունը երեխայի աշխատանքը վերացնելու գործում, սահմանված ժամկետում ձեռնարկում է արդյունավետ միջոցառումներ ուղղված՝

ա) երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերում երեխաների ներգրավման կանխմանը,

բ) անհրաժեշտ և համապատասխան ուղղակի աջակցություն ցույց տալուն երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերում երեխաների զբաղվածության դադարեցման, ինչպես նաև նրանց վերականգնման և սոցիալական ինտեգրման համար,

գ) երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերից ազատված բոլոր երեխաներին անվճար բազային կրթության, ինչպես նաև, ըստ հնարավորության և անհրաժեշտության, մասնագիտական պատրաստվածության տրամադրմանը,

դ) առավել խոցելի վիճակում գտնվող երեխաների հայտնաբերմանը և նրանց հետ կապի հաստատմանը, և

ե) աղջիկների վիճակի առանձնահատկությունները հաշվի առնելուն:

Կոնվենցիան ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2006թ. հունվարի 2-ից:

Բաժին 7
Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները

Անչափահասների կողմից կատարված հանցանքների գործերով վարույթն իրականացվում է ընդհանուր կարգով, սակայն սահմանում են անչափահասների իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: Դրանք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձին գլխում, ինչն ընդգծում է անչափահաս կասկածյալների ու մեղադրյալների իրավունքների ապահովման դատավարական երաշխիքներն անվերապահորեն պահպանելու անհրաժեշտությունը:

Բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով անհրաժեշտ է պարզել նաև անչափահասի՝

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).
2) կյանքի և դաստիարակության պայմանները.
3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը:

Անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը:

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում:

Դատարանը, դատավճիռ կայացնելիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Այս դրույթները նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված 50-րդ գլխով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու

պահին: Դա նշանակում է, որ գործով նախնական և դատական քննությունը վարվում են այս կանոններով՝ անկախ գործի քննության ընթացքում անձի չափահաս դառնալու հանգամանքից: Նման կարգը պահպանվում է նաև այն ժամանակ, երբ քննվող երկու կամ ավելի հանցանքներից մեկն անձը կատարել է մինչև տասնութ տարեկան դառնալը, իսկ մյուսը (մյուսները)՝ չափահաս տարիքում:

Անչափահասների գործերով վարույթի հատուկ կարգ սահմանելով՝ օրենսդիրը ելնում է անչափահաս կասկածյալների ու մեղադրյալների տարիքային, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններից, որոնք պահանջում են նրանց իրավունքների իրականացման լրացուցիչ երաշխիքներ:

Այս կատեգորիայի գործերի քննության հատուկ կարգը նպաստում է կատարված հանցանքի բոլոր հանգամանքների առավել լրիվ ու խոր ուսումնասիրությանը, ինչպես նաև դրա կատարման պատճառների ու պայմանների բացահայտմանը: Բացի դրանից, այն ապահովում է, որ անչափահասի նկատմամբ կիրառվող ներգործության ցանկացած միջոց միշտ համապատասխանի նրա անձին և կատարած հանցանքին:

Անչափահասների գործերով վարույթի իրականացման հատուկ կանոնները կոչված են լրացուցիչ երաշխիքներ սահմանելու գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, հանցագործությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտման, անչափահասի կողմից իր դատավարական իրավունքների իրականացման, գործի արդարացի քննության, ինչպես նաև անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ նրա անձին և կատարած արարքին համաչափ ներգործության միջոցների կիրառման համար:

Բաժին 8
ՀՀ գերագույն դատարանի պլենումի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ

§1. «Հայրությունը որոշելու և երեխաների դաստիարակության ու պահելու վերաբերյալ վեճերը լուծելիս դատարանների կողմից օրենսդրության կիրառման մասին» ՀՀ գերագույն դատարանի որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՊԼԵՆՈՒՄԻ

«2» հոկտեմբերի, 1992 թ. ք. Երևան

Ծնողների՝ զավակներին դաստիարակելու և պահելու իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ վեճերի ճիշտ լուծումն ապահովում է երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը և կարող է նպաստել երեխաների պատշաճ դաստիարակության համար ծնողների պատասխանատվության բարձրացմանն ու անչափահասների իրավախախտումների կանխմանը:

Հանրապետության դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ վեճերը հիմնականում ճիշտ են լուծվում: Դրա հետ միաժամանակ հիշյալ բնույթի գործեր քննելիս թույլ են տրվում առանձին սխալներ, ինչպես նաև ծագում են հարցեր, որոնք պարզաբանում են պահանջում:

Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի պլենումը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դատարանների ուշադրությունը հրավիրել հայրությունը որոշելու և երեխաների դաստիարակության ու պահելու վերաբերյալ վեճերը քննելիս օրենքը խստորեն պահպանելու, այդ գործերը պատշաճ կարգով դատաքննության նախապատրաստելու, գործի փաստական հանգամանքները, երեխաների կյանքի պայմանները և կողմերի փոխհարաբերությունները լիովին պարզելու անհրաժեշտության վրա:

2. Դատարանի քննությանը ենթակա են ծնողների և զավակների փոխադարձ իրավունքների ու պարտականությունների հետ կապված հետևյալ վեճերը.

հայրությունը որոշելու, ծնունդների գրանցման մատյանում երեխայի ծնողների գրանցումն անվավեր ճանաչելու, ալիմենտի բռնագանձման և դրա չափը պակասեցնելու կամ վճարումից ազատելու, անջատ բնակվող ծնողների միջև երեխաների ապրելու վայրի վերաբերյալ, երեխաներից անջատ ապրող ծնողի երեխաների դաստիարակությանը մասնակցելու արգելքները վերացնելու, այլ անձանց մոտ գտնվող երեխաներին ծնողներին վերադարձնելու, ծնողական իրավունքներից զրկելու և ծնողական իրավունքներում վերականգնելու, առանց ծնողական իրավունքներից զրկելու երեխաներին ծնողներից վերցնելու, որդեգրումը վերացնելու ու այն անվավեր ճանաչելու մասին և այլ վեճեր:

3. Հայրությունը որոշելու վերաբերյալ գործերը դատարանները քննության են առնում հայցային վարույթի կարգով այն անձանց դիմումի հիման վրա, որոնք նշված են ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 54 հոդվածի առաջին մասում, հետևաբար դատավորը պարտավոր է հայրությունը որոշելու վերաբերյալ հայցադիմում ընդունել ոչ միայն երեխայի մորից, այլ նաև այն անձից, որն իրեն համարում է երեխայի հայրը, բայց մայրը հրաժարվում է նրա հետ համատեղ դիմում տալ:

Նման հայցը կարող է հարուցել նաև ինքը՝ երեխան, չափահաս դառնալուց հետո: Անկախ նրանից, թե ում կողմից է հայցը հարուցված, չափահաս անձանց նկատմամբ հայրության հաստատումը թույլ է տրվում միայն նրանց համաձայնությամբ: ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 55 հոդվածի համաձայն երեխայի հոր կամ մոր վերաբերյալ ծննդյան գրանցման մատյանում կատարված գրանցումը վիճարկելու իրավունք ունեն միայն այդ անձինք:

4. Հայրության ճանաչման պահանջ ներկայացվող անձի մահվան դեպքում նման գործերի քննությունը կատարվում է հատուկ վարույթի կարգով, շահագրգռված անձանց մասնակցությամբ, որպիսիք հանդիսանում են մահացածի ժառանգները:

Հայրությունը ճանաչելու փաստը դատարանը կարող է հաստատել ինչպես այն դեպքում, երբ երեխան գտնվել է անձի խնամքի տակ նրա մահվան պահին, այնպես էլ դրանից առաջ, եթե այդ անձը իրեն

ճանաչել է երեխայի հայր: Այդպիսի փաստ կարող է հաստատվել նաև այն անձի մահից հետո, որն իրեն ճանաչել է ապագա երեխայի հայր մոր հղիության ժամանակամիջոցում:

5. Հայրությունը որոշելու վերաբերյալ դիմումը դատարանի վարույթ կարող է ընդունվել երեխայի ծնունդը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելուց հետո, երբ երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է մոր ազգանունով, իսկ երեխայի հոր անունը և հայրանունը գրանցվել են մոր ցուցումով:

Այդ գործերը դատաքննության նախապատրաստելիս անհրաժեշտ է պահանջել երեխայի ծննդյան գրանցման ակտի պատճեն:

Դատարանները վարույթ չպետք է ընդունեն հայրությունը որոշելու վերաբերյալ դիմումը, եթե երեխայի ծննդյան գրանցման ակտում որպես հայր նշված է որոշակի անձ: Նման դեպքերում հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է հարուցվել միայն կատարված գրանցումն անվավեր ճանաչելուց հետո:

6. ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 51 հոդվածի համապատասխան ծնողների և զավակների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա, ուստի հայրությունը որոշելու վերաբերյալ գործերը քննելիս պետք է պարզել արդյոք չի բացառվում երեխան պատասխանողից սերված լինելու հանգամանքը: Անհրաժեշտության դեպքում երեխայի սերվելու հետ կապված հարցերը պարզելու համար դատարանը կարող է նշանակել դատաբժշկական փորձաքննություն:

7. Հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը բավարարելու համար անհրաժեշտ է ոչ միայն որ հաստատված լինի երեխայի պատասխանողից սերված լինելու փաստը, այլ նաև առկա լինի ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 54 հոդվածի 2-րդ մասում թվարկված հանգամանքներից որևէ մեկը:

8. Այն դեպքում, երբ պատասխանողը դատական նիստում ճանաչում է հայրությունը, կողմերին պետք է բացատրել հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա հոր գրանցումը կատարելու կարգը և եթե պատասխանողը համաձայնվում է դիմում տալ, դատարանը կարող է որոշակի ժամկետով հետաձգել գործի քննությունը:

Ծնողների համատեղ դիմումի հիման վրա տրված ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում գործի վարույթը ենթակա է կարճ-

ման, բայց դատարանը հայց ներկայացնող անձի պահանջով լուծում է ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ վեճը:

9. Ի տարբերություն հայրությունը որոշելու մասին վեճերի, որոնց համար վաղեմության ժամկետ չի սահմանված, երեխաների շահերից ելնելով ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 55 հոդվածը սահմանում է երեխայի ծնողների մասին գրանցումը վիճարկելու մեկ ամյա ժամկետ, որի ընթացքը սկսում է այն ժամանակից, երբ երեխայի հայր կամ մայր գրանցված անձին հայտնի է դարձել կամ պետք է հայտնի դառնար կատարված գրանցման մասին: Այդ ժամկետը, որպես հայցային վաղեմության ժամկետ, կարող է կասեցվել, ընդհատվել և վերականգնվել, իսկ եթե այն բաց է թողնվել առանց հարգելի պատճառի, ապա հայցը կարող է մերժվել այդ հիմքով:

10. Դատարանները երեխաների դաստիարակության մասին գործերը քննելիս խստորեն պետք է ղեկավարվեն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 63 հոդ., ըստ որի երեխաների դաստիարակությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ: Ծնողները, որպես կանոն, երեխաների դաստիարակությունը և խնամքը իրականացնում են համատեղ:

Երեխայի համատեղ դաստիարակությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ նա ապրում է ծնողների հետ, այլ նաև նրանց անջատ բնակության դեպքում, երբ ծնողները հաղորդակցվում են երեխայի հետ, նրա նկատմամբ ցուցաբերելով ծնողական հոգատարություն:

Երեխայի համատեղ խնամքի տակ պետք է հասկանալ ծնողների կողմից նրան պարբերաբար օգնություն ցույց տալը՝ անկախ օգնության չափից:

11. Երեխաների դաստիարակության հետ կապված բոլոր տեսակի վեճերը քննելիս, անկախ այն բանից, թե ում կողմից է հայց հարուցվել, ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 76 հոդվածի համապատասխան գործին մասնակից պետք է դարձվի խնամակալության և հոգաբարձության մարմինը, որը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42 հոդվածով սահմանված կարգով գործի վերաբերյալ եզրակացություն է տալիս:

Գործը դատաքննության նախապատրաստելիս անհրաժեշտ է պահանջել, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ուսումնասիրվի երեխայի ու նրա դաստիարակությունը ստանձնելու պահանջ ներկայացնող անձանց կենսապայմանները և միայն

այդ մարմնի եզրակացությունն ու կենսապայմանների հետազոտման մասին արձանագրությունը ստանալուց հետո գործը նշանակել քննության:

12. Դատարանները պետք է նկատի ունենան, որ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 66 հոդվածով սահմանված է անջատ ապրող ծնողների միջև երեխաների դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման նախնական արտադատարանական կարգ: Այդ վեճերը դատարանները կարող են քննել, եթե խնամակալության և հոգաբարձության մարմինը երեխայի դաստիարակությանը անջատ ապրող ծնողի մասնակցության կարգ է սահմանել, բայց ծնողները կամ նրանցից որևէ մեկը չեն ենթարկվում այդ մարմինների ցուցումներին: Նման դեպքերում հայցը կարող է հարուցվել խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից: Եթե հայց է հարուցում երեխայի ծնողներից որևէ մեկը, ապա դատարանը պարտավոր է ՀՀ քաղ. դատ. օր. 36 հոդվածի համապատասխան գործի քննությանը, որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, ներգրավել խնամակալության և հոգաբարձության մարմնին:

13. Անջատ բնակվող ծնողների միջև երեխայի ապրելու վայրի վերաբերյալ վեճերը լուծելիս ծնողներից որևէ մեկին առավելություն տրվել չի կարող, քանի որ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 62 հոդվածի համապատասխան հայրը և մայրը իրենց զավակների նկատմամբ ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

Նույն օրենսգրքի 64 հոդվածի համապատասխան այդ գործերով կայացված վճիռները պետք է բխեն երեխաների շահերից, որի համար անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքը և կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրին, այն հանգամանքը, թե ծնողներից ով է առավել հոգատար և ուշադիր երեխաների նկատմամբ, ծնողների անձնական հատկությունները և դաստիարակության պատշաճ պայմաններ ստեղծելու հնարավորությունը: Ծնողներից մեկի նյութական-կենցաղային դրության առավելությունը երեխաներին նրան հանձնելու որոշիչ պայման չի հանդիսանում:

Դատարանը պետք է կողմերին բացատրի, որ երեխայից անջատ ապրող ծնողը իրավունք ունի շփվելու երեխայի հետ, մասնակցելու նրա դաստիարակությանը, իսկ այն ծնողը, որի մոտ ապրում է երեխան, իրավունք չունի մյուս ծնողին արգելք հանդիսանալ: Նման արգելքը

կարող է բացասաբար անդրադառնալ երեխայի վրա և ելնելով երեխայի շահերից հնարավոր է այդ հիմքով երեխային հանձնել մյուս ծնողին:

14. Երեխաներից անջատ ապրող ծնողի երեխաների դաստիարակությանը մասնակցելու արգելքները վերացնելու մասին վեճեր լուծելիս պետք է ստուգել արդյոք խնամակալության և հոգաբարձության մարմինների սահմանած կարգը համապատասխանում է երեխաների շահերին և ապահովում է արդյոք ծնողների բավարար մասնակցությունը նրանց դաստիարակությանը:

Ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից դատարանը կարող է սահմանել երեխայի դաստիարակությանը առանձին ապրող ծնողի մասնակցության կարգ՝ ծնողի կողմից երեխային տանը, մանկամսուրում, մանկապարտեզում, դպրոցում կամ այլ մանկական հիմնարկներում որոշակի օրերին և ժամերին այցելելը կամ երեխայի կողմից ծնողին այցելելը, երեխայի հետ հանգստյան և տոն օրերը, արձակուրդներն ամբողջությամբ կամ մասնակիորեն անցկացնելը և այլն:

15. Եթե ծնողներն ունեն մի քանի երեխաներ և նրանց բնակության վայրի վերաբերյալ համաձայնության չեն գալիս, դատարանն այդ վեճերը լուծելիս չի կարող մեխանիկական մոտեցում ցուցաբերել և երեխաներին բաժանել իրարից: Սակայն, երբ դա բխում է երեխաների շահերից, հնարավոր է երեխաներից մեկին թողնել մոր մոտ, իսկ մյուսին՝ հոր: Նման դեպքերում ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 81 հոդվածի համապատասխան ալիմենտ է գանձվում նյութապես առավել ապահովված ծնողից՝ մյուսի օգտին:

16. Ծնողներն այլ անձանց համեմատությամբ իրենց երեխաներին անձամբ դաստիարակելու նախապատվության իրավունք ունեն, բայց դատարանը կարող է մերժել ծնողի հայցը այլ անձանց մոտ գտնվող երեխան վերադարձնելու մասին, եթե գալիս է այն համոզման, որ երեխան նրան հանձնելը հակասում է անչափահասի շահերին:

Այդ վեճերը քննելիս դատարանը հաշվի է առնում երեխայի պատշաճ դաստիարակությունն ապահովելու ծնողի հնարավորությունը, երեխայի փոխհարաբերությունների բնույթը ծնողի և այն անձանց հետ, որոնց մոտ նա ապրում է և այլն:

17. Երեխաների դաստիարակության հետ կապված վեճերի լուծման համար նշանակություն ունի նաև իրենց՝ երեխաների կարծիքը, բայց անթույլատրելի է նրանց հարցաքննել որպես վկաներ՝ ծնողների վարքագծի և ապրելակերպի մասին:

Կողմերի նկատմամբ երեխաների կարծիքի, նրանց հարաբերությունների պարզումը կատարվում է ժողկրթբաժնի կողմից հետազոտություն կատարելիս, իսկ եթե դատարանը անհրաժեշտ է համարում լսել երեխային, ապա այդպիսի հարց ու փորձը հնարավոր է կատարել հաշվի առնելով երեխայի տարիքը, զարգացումը, մանկավարժի ներկայությամբ և այնպիսի պայմաններում, որը բացառի նրա վրա շահագրգռված անձանց ազդեցությունը:

18. Օրենքի համաձայն անչափահաս երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների լիազորություններն իրականացնում են պատգամավորների շրջանային /քաղաքային/ խորհուրդների գործադիր կոմիտեները, ժողովրդական կրթության բաժինների միջոցով: Ժողկրթբաժնի եզրակացությունը դատարանը գնահատում է գործի մյուս նյութերի հետ ամբողջությամբ: Այդ եզրակացության հետ համաձայն չլինելը պետք է պատճառաբանվի վճռում:

Եթե երեխաների բնակության վայրն, նրանց ծնողներին հանձնելու վերաբերյալ վեճերով կողմերը ապրում են տարբեր շրջաններում, ապա նրանց կենսապայմանների հետազոտման արձանագրությունները պետք է կազմվեն յուրաքանչյուրի բնակավայրի ժողկրթության բաժինների կողմից, իսկ եզրակացությունը պետք է տա երեխայի գտնվելու վայրի ժողկրթբաժինը, որի ներկայացուցիչն էլ պետք է մասնակցի դատական նիստին:

Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է լսել հետազոտման արձանագրությունը կազմած անձանց:

19. Երեխաների դաստիարակությանը վերաբերող հարաբերությունները տևական են, ուստի երեխաների հանձնումը մյուս ծնողին, այլ անձանց խնամակալության և հոգաբարձության մարմիններին արգելք չի հանդիսանում այն ծնողին, որը գտնում է, որ վերացել են այն հանգամանքները, որոնց առկայության պայմաններում դատարանը այդպիսի վճիռ է կայացրել, հայց ներկայացնելու երեխաներին իրեն հանձնելու մասին: Դատարանը հաշվի առնելով փոփոխված հանգամանքները և երեխաների շահերը իրավունք ունի կայացնելու նոր վճիռ:

20. Դատարանները պետք է նկատի ունենան, որ ծնողական իրավունքներից զրկումը ծայրահեղ միջոց է և կարող է կիրառվել միայն ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 68 հոդվածի 1-ին

մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և նույն օրենսգրքի 69 հոդվածում նշված անձանց կողմից հարուցված հայցի հիման վրա:

Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականությունից:

Ծնողական իրավունքները կարող են վերականգնել միայն այդ իրավունքներից զրկված անձի կամ դատախազի հայցով, ընդորում վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է:

21. Ալիմենտի բռնագանձման վերաբերյալ դիմումները քննության են առնվում ժողդատավորի կողմից միանձնյա, առանց քաղաքացիական գործ հարուցելու, այն անձի համաձայնության դեպքում, որը պարտավոր է ալիմենտ վճարել, կամ էլ դատարանի կողմից սահմանված ժամկետում՝ ալիմենտ վճարելու դեմ նրանից առարկություններ չստանալու դեպքում:

Ալիմենտի բռնագանձման որոշման դեմ գանգատ լինելու դեպքում ժողդատավորը բեկանում է իր որոշումը և ալիմենտի պահանջը քննության առնում հայցային վարույթի կարգով:

Ծնողները չեն կարող հայց հարուցել իրենց օգնության կարիք ունեցող անաշխատունակ չափահաս զավակների օգտին ալիմենտ բռնագանձելու համար, քանի որ նրանք միայն անչափահաս զավակների օրինական ներկայացուցիչներն են հանդիսանում:

Նման հայցադիմում կարող են ներկայացնել ինքը՝ չափահաս զավակը, իսկ եթե նա անգործունակ է ճանաչված, ապա այն անձը, որն օրենքով սահմանված կարգով նրա խնամակալն է նշանակված:

22. Անչափահաս երեխաների համար բռնագանձվող ալիմենտի չափը որոշվում է պատասխանողի վաստակի նկատմամբ բաժնային հարաբերությամբ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 78 հոդվածով սահմանված չափով: Այդ բաժինները ավելացվել չեն կարող, իսկ նվազեցնել դատարանը կարող է նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում թվարկված հիմքերով:

Նկատի ունենալով, որ ալիմենտի չափը նվազեցնելը օրենքի պարտադիր պահանջը չէ, դատարանը կարող է գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով /երեխայի հիվանդությունը, ծնողներից բավարար նյութական միջոցներ չստանալու պահանջով անչափահասի աշխատելը և այլն/ մերժել այդպիսի հայցը:

Անչափահաս երեխաների համար բռնագանձվող ալիմենտի չափը չի կարող պակաս լինել հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի քարորդ բաժնից՝ մեկ երեխայի համար, երկու երեխայի համար՝ 1/3-րդ, երեք և ավելի երեխաների համար՝ կես բաժնից:

Ալիմենտի բռնագանձումը կայուն դրամական գումարով հնարավոր է նշված չափերից ոչ պակաս, միայն վճարում պահանջող անձի խնդրանքով և ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 81 հոդվածում թվարկված պայմանների առկայության դեպքում:

23. Եթե երեխան տեղափոխվում է ալիմենտ վճարող ծնողի մոտ, մշտական բնակության, իսկ ալիմենտ ստացող ծնողը չի հրաժարվում այն ստանալուց, ապա ալիմենտի վճարումից ազատումը կատարվում է ոչ թե կատարողական վարույթի կանոններով, այլ դատարանի վճռով, հայցային վարույթի կարգով:

Բացառիկ դեպքերում ՀՀ քաղ. դատ. օր. 206 հոդվածի համապատասխան կարող է տեղափոխվել ալիմենտի բռնագանձման վերաբերյալ վճռի կատարման եղանակը և ալիմենտը վճռում սահմանված չափով հետագա տարիների համար կատարված հաշվարկով բռնագանձվել միանվագ:

24. ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 136 հոդվածի համաձայն որդեգրումը կարող է անվավեր ճանաչվել միայն երեխայի ծնողների խնամակալության ու հոգաբարձության մարմինների և դատախազի հայցի հիման վրա, իսկ որդեգրումը վերացնելու պահանջով, բացի նշված անձանցից, նույն օրենսգրքի 130 հոդվածի համաձայն կարող է դիմել նաև որդեգրողի ամուսինը, եթե որդեգրումը կատարվել է առանց նրա համաձայնության: Որդեգրողների հայցով որդեգրումը վերացվել կամ անվավեր ճանաչվել չի կարող, քանի որ որդեգրման ակտով նրանք որդեգրվածների նկատմամբ ձեռք են բերել ծնողների իրավունքներ և պարտականություններ:

Որդեգրողի, ինչպես նաև որդեգրումը վերացնելու կամ անվավեր ճանաչելու մասին հայցը հարուցելու իրավունք չունեցող այլ անձանց դիմումների ընդունումը դատարանը կարող է մերժել, իսկ այն ընդունված լինելու դեպքում գործի վարույթը կարճել և այդ անձանց բացատրել, որ նրանք կարող են դիմել խնամակալության և հոգաբարձության մարմնին, կամ դատախազին, որոնցից կախված է նման պահանջ ներկայացնելու հայցի լուծումը /ՀՀ քաղ. դատ. օր. 128 հոդվա-

ծի 1-ին կետ, 218 հոդվածի 1-ին կետ և ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 131 հոդված/:

25. Դատարանները որդեգրման մասին գործերը քննելիս պարտավոր են միմյանցից հստակորեն սահմանազատել որդեգրումը վերացնելու և որդեգրումն անվավեր ճանաչելու հասկացությունները:

Որդեգրումը կարող է վերացվել այն դեպքում, երբ կատարվել է առանց որդեգրվածի ծնողների կամ որդեգրողի ամուսնու համաձայնության, ինչպես նաև երբ որդեգրողը իր պարտականությունները պատշաճ կերպով չի կատարում կամ երբ այդ է պահանջում երեխայի շահերը:

Որդեգրումը վերացնել չի թույլատրվում, եթե այն վերացնելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու պահին որդեգրվածը չափահաս է դարձել: Այդ դեպքերում որդեգրումը կարող է վերացվել միայն որդեգրողների, որդեգրվածի և նրա ծնողների փոխադարձ համաձայնությամբ:

26. Դատարանները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն վերոհիշյալ գործերով վճիռների եզրափակիչ մասի շարադրման, դրանց կատարման վրա: Հաշվի առնելով լուծվող վեճերի առանձնահատկությունները, դատարանները անհրաժեշտության դեպքում պարտավոր են քննության առնել այդպիսի վճիռների կատարման եղանակն ու կարգը որոշելու հարցը:

Հայրությունը որոշելու, հայրության փաստը և հայրության ճանաչման փաստը հաստատելու վերաբերյալ վճռի եզրափակիչ մասում պետք է տեղեկություններ պարունակվեն, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում հայրությունը գրանցելու համար՝ հոր ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամսաթիվը, ծննդավայրը, ազգությունը, բնակության և աշխատանքի վայրը:

ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 138 հոդվածի համապատասխան որդեգրումն անվավեր ճանաչելու կամ որդեգրումը վերացնելու վերաբերյալ վճիռը, այն ուժի մեջ մտցնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում, ուղարկվում է որդեգրման վերաբերյալ որոշումը կայացրած մարմնին և այն մարմնին, որտեղ գրանցված է որդեգրումը:

§2. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ մասի, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ» ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),
նախագահությամբ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թ. հոկտեմբերի 26-ին դռնբաց դատական նիստում, քննելով Նանա Միրզոյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքն ըստ էմմա, Հարություն և Տիգրան Վարդապետյանների հայցի ընդդեմ Նանա և Դավիթ Միրզոյանների՝ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքում բաժինը փոխհատուցմամբ վճարել թույլատրելու և սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.06.2006 թվականի վճռի դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան հայցվորները պահանջել են թույլատրել փոխհատուցմամբ վճարել ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող Երևան քաղաքի Արղության փողոցի 40 շենքի թիվ 17 բնակարանի՝ Նանա և Դավիթ Միրզոյանների բաժինը և դադարեցնել նրանց սեփականության իրավունքը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 05.04.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է թույլատրել էմմա, Տիգրան և Հարություն Վարդապետյաննե-

րին 5044 (հինգ հազար քառասունչորս) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ փոխհատուցում տրամադրելու միջոցով դադարեցնել Նանա և Դավիթ Միրզոյանների սեփականության իրավունքը Երևանի Արողության փողոցի 40 շենքի թիվ 17 բնակարանում նրանց ունեցած 1/8 բաժնի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.06.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է թույլատրել Էմմա, Տիգրան և Հարություն Վարդապետյաններին ընդհանուր 2.560.000 ՀՀ դրամ գումարի փոխհատուցում վճարել Նանա Միրզոյանին և Դավիթ Միրզոյաններին, որից հետո վերջիններիս սեփականության իրավունքը դադարեցնել Երևան քաղաքի Արողության փողոցի 40 շենքի թիվ 17 բնակարանում ունեցած 1/8-րդ բաժնի նկատմամբ:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Նանա Միրզոյանի ներկայացուցիչը:

Էմմա, Հարություն և Տիգրան Վարդապետյանները ներկայացրած վճռաբեկ բողոքին պատասխան չեն ներկայացրել:

2. Սույն վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը, որը չպետք է կիրառեր և չի կիրառել «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերող անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը անտեսելով գործում առկա ապացույցները, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցվորները չեն ապացուցել իրենց պահանջների հիմքում ընկած հանգամանքները, թույլատրել է Էմմա, Հարություն և Տիգրան Վարդապետյաններին վճարել փոխհատուցում Նանա և Դավիթ Միրզոյաններին, դադարեցնելով վերջիններիս սեփականության իրավունքը:

Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման 06.05.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ բնակելի մակերեսի 1/8-րդ մասը հնարավոր է առանձնացնել լրացուցիչ շինարարական աշխատանքներ կատարելու միջոցով:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին բողոքի հիմքը բողոք բերած անձը որևէ փաստարկով չի հիմնավորել:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.06.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

ա/ Երևան քաղաքի Արողության փողոցի 40 շենքի թիվ 17 բնակարանի սեփականատերերն են Նանա Միրզոյանը՝ 1/16-րդ, Դավիթ Միրզոյանը՝ 1/16-րդ, Տիգրան Վարդապետյանը՝ 5/16-րդ, Էմմա Վարդապետյանը՝ 5/16-րդ և Հարություն Վարդապետյանը՝ 4/16-րդ բաժիններով:

բ/ Բնակարանը 07.06.2006 թվականի դրությամբ գնահատվել է 24.200.000 ՀՀ դրամ:

գ/ Բնակարանի բնակելի մակերեսի 1/8-րդ մասն ըստ կադաստրային գործի տվյալների հնարավոր է առանձնացնել միայն լրացուցիչ շինարարական աշխատանքներ կատարելու միջոցով:

դ/ Բնակարանի ընդհանուր մակերեսը կազմում է 82.7 քմ, որից բնակելի մակերեսը կազմում է 52.2 քմ: Դրանից, 1-ին սենյակ՝ 28.4 քմ, 2-րդ սենյակ՝ 12.9 քմ, 3-րդ սենյակ՝ 10.9 քմ: Բնակելի մակերեսի 1/8 մասը կազմում է 6.52 քմ: Բնակարանի հատա-

կագծում 6.52 քմ առանձին բնակելի սենյակ գոյություն չունի և այն բաժանել հնարավոր չէ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթում կարևորելով սեփականատիրոջ բաժինն աննշան լինելու, նշված բաժինը իրապես առանձնացնել հնարավոր չլինելու և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատիրոջ էական շահ չունենալու չափանիշները, դատարանին հնարավորություն է ընձեռել այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը, հետազոտելով և գնահատելով Նանա և Դավիթ Միրզոյանների բաժինը նշված բնակարանում աննշան լինելու, իսկ բնակելի մակերեսից այդ բաժինն առանձնացնելու անհնարինության և ընդհանուր գույքի օգտագործման մեջ Նանա ու Դավիթ Միրզոյանների էական շահ չունենալու, Նանա Միրզոյանի մորը սեփականության իրավունքով պատկանող Երևանի Հալաբյան փողոցի 11 շենքի թիվ 59 բնակարանում Նանա ու Դավիթ Միրզոյանների բնակվելու (գ.թ.30-31) վերաբերյալ գործում առկա ապացույցները, գործի փաստերի հիման վրա իրավաչափորեն կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի պահանջնե-

ը՝ սեփականության մյուս մասնակիցներին թույլատրելով Նանա և Դավիթ Միրզոյաններին վճարելու փոխհատուցում՝ դադարեցնելով նրանց սեփականության իրավունքը:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասով վճռաբեկ բողոքի քննությունն անհնար է, քանի օրենքի այս դրույթի խախտման մասին բողոքը որևէ պատճառաբանություն չի պարունակում:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև իր իրավական դիրքորոշումը հետևյալ հարցի վերաբերյալ. բնակարանից բաժինն առանձնացնելու վերաբերյալ պահանջների քննության ժամանակ պետք է հաշվի առնվի ոչ միայն բնակելի, այլ նաև ոչ բնակելի, օժանդակ տարածքների (խոհանոց, միջանցք, սանհանգույց), ինչպես նաև հնարավոր առանձին մուտքի տրամադրման տեխնիկական հնարավորության առկայությունը: Նման հնարավորության բացակայության դեպքում բնակարանի մասի առանձնացումը պետք է դիտել անհնարին: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն եկավ եզրակացության այն մասին, որ սույն վճռաբեկ բողոքն անհիմն է, վերաքննիչ դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատելով գործում առկա ապացույցները, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.06.2006 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Է. ՀԱՅՐԻՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

§3. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ և 225-րդ հոդվածների, երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ» ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)
նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
Վ. Աբելյանի
Ս. Սարգսյանի
Դ. Ավետիսյանի
Հ. Ղուկասյանի
Ս. Օհանյանի

2008 թվականի մարտի 27-ին դռնբաց դատական նիստում, քննելով Նիկողոս Դաբաղյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Նիկողոս Դաբաղյանի հայցի ընդդեմ Մարի, Նշան և Տաթևիկ Դաբաղյանների՝ բնակելի տնից վտարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Նիկողոս Դաբաղյանը պահանջել է սեփականության իրավունքով պատկանող Երևանի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 15 բնակելի տնից վտարել Մարի, Նշան և Տաթևիկ Դաբաղյաններին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 10.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Նշան և Մարի Դաբաղյանների մասով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նիկողոս Դաբաղյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 225-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը, Տաթևիկ Դաբաղյանին վեճի առարկա բնակարանից չվտարելով, խախտել է Նիկողոս Դաբաղյանի սեփականության իրավունքը՝ նրան զրկելով սեփականությունը տիրապետելու և օգտագործելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով «Երեխայի իրավունքների մասին»

ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Տաթևիկ Դաբաղյանի համար նույնպես անհրաժեշտ էր, որ նա (օրինական ներկայացուցիչը) սեփականատիրոջ՝ Նիկողոս Դաբաղյանի հետ կնքեր համապատասխան պայմանագիր, ինչը կոնկրետ դեպքում չի արվել: Բացի այդ, Տաթևիկ Դաբաղյանի խնամքը հանձնվել է մորը՝ Մարի Դաբաղյանին, այսինքն՝ Տաթևիկ Դաբաղյանի խնամքով, այդ թվում՝ բնակարանային ապահովությամբ, պետք է հոգ տանի մայրը, քանի որ նա հանդիսանում է նրա ընտանիքի անդամը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.10.2007 թվականի վճիռը՝ Տաթևիկ Դաբաղյանի մասով և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 10.07.2007 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետեևյալ փաստերը՝

1) Երևանի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 15 բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Նիկողոս Դաբաղյանին:
2) 15.06.1990 թվականին ծնված Տաթևիկ Դաբաղյանը Նիկողոս Դաբաղյանի դուստրն է:
3) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 13.12.2002 թվականի վճռով փոխհատուցմամբ դադարեցվել է Մարի Դաբաղյանի բնակտարածության օգտագործման իրավունքը վիճելի տան նկատմամբ: Վերջինս վտարվել է այդ բնակարանից:
4) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 25.03.2004 թվականի վճռով Տաթևիկ Դաբաղյանի խնամքն ու դաստիարակությունը հանձնվել է մորը՝ Մարի Դաբաղյանին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ծնողների հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամներ են նաև երեխաները: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

Վերոգրյալի հոդվածներից հետևում է, որ երեխան ունի ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու իրավունք:

Ծնողների զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքի ապահովումը միաժամանակ ծնողների պարտականությունն է, նրանք հավասարապես պարտավոր են երեխային ապահովել բնակելի տարածությունում ապրելու իրավունքով:

Ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքը չի կարող նույնացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով նախատեսված բնակելի տարածության օգտագործման իրավունքի հետ, քանի որ ապրելու իրավունքը անմիջականորեն կապված է ծնողի անձի հետ, այլ ոչ թե ծնողի սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող գույքի հետ: Ծնողի զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքը ծագում է օրենքի ուժով և պահպանվում է մինչև երեխայի 18 տարին լրանալը: Այսինքն՝ ծնողի հետ ապրելու իրավունքը երեխայի մոտ ծագում է ծնող-երեխա ազգակցական կապի ուժով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա խնամքը հանձնված է ծնողներից մեկին,

այսինքն՝ անգամ ամուսնալուծված ծնողը պարտավոր է թույլատրել երեխային բնակվել իր կողմից զբաղեցրած բնակարանում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Նիկողոս Դաբաղյանը վիճելի բնակարանի սեփականատերն է, իսկ անչափահաս Տաթևիկ Դաբաղյանը՝ նրա դուստրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահաս Տաթևիկ Դաբաղյանն օրենքի ուժով ապրելու իրավունք ունի Նիկողոս Դաբաղյանի սեփականության ներքո գտնվող բնակարանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան
Վ. Աբելյան
Ս. Սարգսյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

§ 4. «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, ՀՀ Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ» ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. Մկրտումյանի
մասնակցությամբ դատավորներ Ս. Սարգսյանի
Վ. Աբելյանի
Ե. Խունդկարյանի
Դ. Ավետիսյանի
Հ. Ղուկասյանի
Ս. Օհանյանի

2008 թվականի դեկտեմբերի 26-ին դռնբաց դատական նիստում քննելով Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանի հայցի ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանը պահանջել է Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչել և Ալվարդ Խաչատրյանին ճանաչել համասեփականատեր:

Հակընդդեմ հայցով Արմեն Խաչատրյանը պահանջել է առանց փոխհատուցման դադարեցնել Թեհմինե, Ալվարդ և Էմմա Խաչատրյանների բնակության իրավունքը և բնակելի տարածությունից վտարել:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.03.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2008 թվականի որոշմամբ Դատարանի 04.03.2008 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Թեհմինե Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ալվարդ Խաչատրյանն Արմեն Խաչատրյանի դուստրն է, ընտանիքի անդամը, որի ուժով համարվել է սեփականաշնորհման սուբ-

յեկտ և պետք է օգտվեր բնակարանի սեփականաշնորհումից բխող բոլոր իրավունքներից:

Վերաքննիչ դատարանի կողմից յուրաքանչյուր ապացույց չի գնահատվել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, մասնավորապես, Քանաքեռավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքը, Ալվարդ Խաչատրյանի համար 1994 թվականին բացված բժշկական ամբուլատոր քարտը, որոնց համաձայն՝ Թեհմինե Խաչատրյանի երեխաներ Ալվարդ և Էմմա Խաչատրյանները ծննդյան օրվանից մշտապես բնակվել են վեճի առարկա տանը, որից հետևում է, որ Ալվարդ Խաչատրյանը սեփականաշնորհման սուբյեկտ է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, վտարելով Ալվարդ և Էմմա Խաչատրյաններին Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 բնակելի տանից, խախտել է «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որը երաշխավորում է ծնողներից յուրաքանչյուրի բնակելի տարածությունում երեխայի ապրելու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.03.2008 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թեհմինե և Արմեն Խաչատրյանները գտնվել են փաստական, իսկ 06.12.1995 թվականից՝ գրանցված ամուսնության մեջ: Համատեղ կյանքում ունեցել են 2 երեխա, Ալվարդ Խաչատրյանը՝ ծնված 08.06.1994 թվականին և Էմմա Խաչատրյանը՝ ծնված 04.05.1998 թվականին:
2. Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 15.11.2007 թվականի վճռով լուծվել է Թեհմինե և Արմեն Խաչատրյանների ամուսնությունը:
3. Վեճի առարկա հասցեով Ալվարդ Խաչատրյանի համար 1994 թվականից բացվել է բժշկական ամբուլատոր քարտ:

4. Քանաքեռավանի գյուղապետարանի կողմից տրված 12.11.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ալվարդ և Էմմա Խաչատրյանները ծննդյան օրվանից մշտապես բնակվել են Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 հասցեում (նախկին 1 փողոց թիվ 19/2):
5. Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշմամբ վեճի առարկա տունը սեփականաշնորհվել է:
6. Թեհմինե Խաչատրյանը 09.08.2001 թվականին հաշվառվել է Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 տանը:
7. 13.02.1996 թվականի սեփականության վկայագրի համաձայն՝ վեճի առարկա բնակելի տան նկատմամբ գրանցված է Պարույր, Արմեն և Ալիսա Խաչատրյանների սեփականության իրավունքը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ. 29.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեփականաշնորհման սուբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհումն ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում ձևակերպվում է տվյալ բնակարանի վարձակալի անունով, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անունով՝ որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ, կամ ընդհանուր բաժնային սեփականություն: Վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգրքի համաձայն՝ վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքնե-

րից և կրում բոլոր պարտականությունները, ինչպես նաև օգտվում են բնակարանների սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք 3 պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այդպիսիք են՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, ինչպես նաև բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Խաչատրյանի դուստր Ալվարդ Խաչատրյանը ծննդյան օրվանից մշտապես բնակվել է Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 հասցեում: «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.09.1992 թվականի թիվ 473 որոշման 22-րդ կետի համաձայն՝ ծնողների (խնամակալների, հոգաբարձուների) հետ բնակվող 16 տարին չլրացած քաղաքացիների հաշվառումը կատարվում է ծնողներից մեկի (խնամակալի, հոգաբարձուի) հաշվառման փաստաթղթերում նրանց մասին տվյալները գրառելու միջոցով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 16 տարին չլրացած քաղաքացիների գրանցումը հաստատված համարելու համար առանձին հաշվառման փաստաթղթի առկայությունը պարտադիր չէ, քանի որ այն պարտադիր կերպով կատարվում է իրենց ծնողի հաշվառման փաստաթղթերում գրառում կատարելու միջոցով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակելի տան սեփականաշնորհման արդյունքում Ալվարդ Խաչատրյանը նույնպես ձեռք է բերել սեփականության իրավունք:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ,

այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարան եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843 (ՎԴ)):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը գալով այն եզրահանգման, որ Ալվարդ Խաչատրյանը սեփականաշնորհման սուբյեկտ չէ, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Ալվարդ Խաչատրյանի համար 1994 թվականից բացված բժշկական ամբուլատոր քարտը և Քանաքեռավանի գյուղապետարանի կողմից տրված 12.11.2007 թվականի տեղեկանքը, որոնցով հիմնավորվում է, որ Ալվարդ Խաչատրյանը ծննդյան օրվանից մշտապես բնակվել է Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 բնակելի տանը՝ Արմեն Խաչատրյանի հետ համատեղ, հետև աբար, վարձակալի հետ համահավասար օգտվում է բնակելի տարածության սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ծնողների հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամներ են նաև երեխաները: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

Վերոգրյալ հոդվածներից հետևում է, որ երեխան ունի ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու իրավունք:

Ծնողների զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքի ապահովումը միաժամանակ ծնողների պարտականությունն է, նրանք հավասարապես պարտավոր են երեխային ապահովել բնակելի տարածությունում ապրելու իրավունքով:

Ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքն անմիջականորեն կապված է ծնողի անձի հետ, այլ ոչ թե ծնողի սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող գույքի հետ: Ծնողի զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքը ծագում է օրենքի ուժով և պահպանվում է մինչև երեխայի 18 տարին լրանալը: Այսինքն՝ ծնողի հետ ապրելու իրավունքը երեխայի մոտ ծագում է ծնող-երեխա ազգակցական կապի ուժով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա խնամքը հանձնված է ծնողներից մեկին, այսինքն՝ անգամ ամուսնալուծված ծնողը պարտավոր է թույլատրել երեխային բնակվել իր կողմից զբաղեցրած բնակարանում (տես, Նիկողոս Դաբաղյանն ընդդեմ Մարի, Նշան և Տաթևիկ Դաբաղյանների՝ բնակելի տնից վտարելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-222 (ՎԴ)):

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Արմեն Խաչատրյանը վեճի առարկա տան համասեփականատեր է, իսկ անչափահաս Էմմա Խաչատրյանը՝ նրա դուստրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահաս Էմմա Խաչատրյանն օրենքի ուժով ապրելու իրավունք ունի Արմեն Խաչատրյանի համասեփականության ներքո գտնվող բնակելի տանը:

Ինչ վերաբերում է բնակելի տնից Թեհմինե Խաչատրյանին վտարելու պահանջին, ապա այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Թեհմինե Խաչատրյանին վտարելու պահանջն ենթակա է մերժման, քանի որ այն ներկայացվել է միայն մեկ սեփականատիրոջ կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը Արմեն, Պարույր, Ալիսա Խաչատրյանների անվամբ տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն հարցին, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անշարժ

գույքի գրանցման մատյանի գրանցումը (իրավական հիմնավորումը տես՝ Սիսիանի քաղաքապետարան ընդդեմ Շահեն Սարգսյան, երրորդ անձինք ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սիսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան, 26.10.2006 թվական, քաղաքացիական գործ թիվ 3-1920/ՎԴ (2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված պայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև Կորյուն Օհանյանին տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով)):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2008 թվականի որոշումը և այն փոփոխել. Թեհմինե Խաչատրյանի հայցը բավարարել մասնակիորեն. Ալվարդ Խաչատրյանին ճանաչել Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 բնակելի տան 1/4 մասի սեփականատեր և այդ մասով անվավեր ճանաչել Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը և Արմեն, Պարույր, Ալիսա Խաչատրյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը: Արմեն, Պարույր, Ալիսա Խաչատրյանների անվամբ տրված սեփականության իրավունքի վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Սարգսյան
Վ. Աբելյան
Ե. Խունդկարյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ARTUR CHAKHOYAN

CHILD RIGHTS

FAMILY LAW MANUAL

Խմբագիր՝ **Վահե ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**
Լեզվաոճական խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**
Տեխնիկական խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
Կազմի ձևավորող՝ **Տիգրան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am